

ԱՊԱԳԻՆՅ

ԼՁ. ՏՄԻԹ ԹԻԻ 1971 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 2 ՓԵՏՐՈՒՄ 2015
• VOL. XXXVI, NO 1971 • LUNDI, 2 FEVRIER 2015 • MONDAY, FEBRUARY 2, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

ԱՆԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԿԱՆԽԱՅԱՍ ՄԱՅ ԵՐԱԺԻՇՏ, ԵՐԳԻՉ, ԽՄԲԱՎԱՐ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ


ԱՐԹՕ ՄԻԻՅԵՆՏԻՍԵԱՆԻ (1950 - 2015)



Մոնթրեալի ահաբեկչության ծանօթ սիրուած ու յարգուած երաժիշտ Արթօ Միւիէնտիսեան Նոր Տարուան ու Ա. Ծնունդի տօնական օրերուն յանկարծամահ եղաւ իր բնակարանին մէջ, խոր սուգի մատնելով հայ եւ օտար երաժշտասերներու եւ քանի մը հազարի հասնող իր նախկին աշակերտներու լայն շրջանակ մը: Ան 64 տարեկան էր, իր երգարուեստի բացառիկ կարողականութեան գազաթնակէտին:

Ողբացեալը ծնած էր Իսթանպուլ 1950-ին, երաժիշտ ընտանիքի մը մէջ: Ուսանած էր տեղւոյն Միսիթարեան Լիսէին մէջ (1957-1968) եւ տեղափոխուելով Մոնթրեալ, Վանիէ Գոլէժի մէջ հետեւած էր երաժշտութեան (1972-1974), ապա մեկնած էր Յայաստան, ուր Կոմիտասի անուան երաժշտանոցին մէջ (1974-1976) տիրապետած էր հայ երգարուեստին: Վերադառնալով Մոնթրեալ, ան ՄթԿիլ Շար. էջ 14

Իրադարձութիւնները Հալէպի մէջ



Ուրբաթ՝ 23 Յունուար 2015-ի յետմիջօրէին զինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ արձակուած հրթիռ մը ինկաւ Հալէպի Թիլել փողոցը, Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդարանին եւ անոր կողքին գտնուող Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ մօտ, որուն հետեւանքով վնասուեցան շրջանի շէնքերը՝ բնակարաններ, խանութներ ու ինքնաշարժներ: Այս մասին կը հաղորդէ «Բերիոյ կիւլ»-ը:

Նշենք, թէ 9 Յունուար 2015-ի յետմիջօրէի զինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ կրկին հրթիռակոծուած էր Նոյն վերոնշեալ շրջանը եւ թիրախ դարձած Հալէպի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդարանին կից գտնուող Սրբուհի Ռիթա Եկեղեցին, որուն իբրեւ հետեւանք եկեղեցւոյ կառոյցը մասամբ քանդուած էր:

Հայաստանի եւ Լ. Ղարաբաղի զոյգ հանրապետութիւններու սահմաններուն վրայ կացութիւնը կը մնայ լարուած

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ամբողջ սահմանի տարբեր հատուածներուն վրայ Ատրպէյճանցի հակառակորդը կը շարունակէ ներթափանցումներու եւ յարձակումներու մարտավարութիւնը:

«Ատրպէյճանական զինեալ ուժերը, առանց նկատի ունենալու իրենց մեծաթիւ կորուստները, զորս կոպտօրէն կը թաքցնեն, կը շարունակեն մարտավարական առումով անիմաստ ներթափանցումներու փորձեր իրականացնել», այս մասին գրած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ քարտուղար Արծրուն Յովհաննիսեան՝ շարունակելով. «Ուրբաթ առաւօտեան ժամը 9:00-ի սահմաններուն Ատրպէյճանական բանակի յատուկ նշանակութեան ստորաբաժանումները յարձակած են Նաեւ Տաւուշի մարզի Բերդի շրջանի մարտական դիրքերէն քանի մը հատին ուղղութեամբ: Հայկական բանակի համապատասխան ստորաբաժանումներուն կողմէ ժամանակին յայտնաբերուելով մարտ սկսած է, որ տեւած է շուրջ կէս ժամ: Հակառակորդը կորուստներ կրելով եւ մարտական ծրագիրը չկատարելով ետ շարտըւած է, սակայն ցաւօք հայկական կողմը ունի երկու զոհ եւ վիրաւորներ: Չոհուած են սպայ Կարէն Գալստեան եւ շարքային զինուոր Արտակ Սարգսեան»:

«Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը կը բաժնէ մեր շարքերէն հեռացած զինուորներուն, կորստեան ծանր վիշտը եւ իր զօրակցութիւնը կը յայտնէ անոնց ընտանիքներուն եւ հարազատներուն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:



Արծրուն Յովհաննիսեան շեշտած է, որ լարուածութեան ամբողջ պատասխանատուութիւնը եւ հետեւանքները կը մնան Ատրպէյճանի զինուորական-քաղաքական ղեկավարութեան խիղճին:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ քարտուղարը նաեւ գրած է. «Ատրպէյճանական կողմը կը շարունակէ իր լկտի քաղաքականութիւնը սեփական զինուորներուն եւ անոնց հարազատներուն նկատմամբ: Երեկ միայն ցերեկային ժամերուն անոնք կորսնցուցած են երեք զինուորներ Զարվաճառի հատուածին մէջ, իսկ Արցախի հարաւային շրջանին մէջ արձակագէն խումբի հրամանատար մը, որ ինկած է հայուհիի դիպուկ գնդակէն»:

Երկայիս՝ Արցախի պաշտպանութեան բանակի յառաջապահ զօրամասերը մարտավարական իրադրութիւնը կը շարունակեն պահել վերահսկողութեան տակ՝ անհրաժեշտ պարագային դիմելով պատասխան գործողութիւններու, կը վստահեցնէ Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը:

Արկաղի Տեր-թադեւոսեան. «Եթէ զիրենք չլռեցնենք՝ մինչեւ Ապրիլ 24 յարձակումները պիտի շարունակուին»

Ըստ ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար Արկաղի Տեր-թադեւոսեանի ըսածներուն համաձայն՝ հակառակորդը աշխուժացած է, քանի որ այս տարի մենք կը պատրաստուինք Տեղասպանութեան 100-րդ տարելիցը նշելու, եւ Ատրպէյճանն ու Թուրքիան ծրագիր կը մշակեն զայն ձախողնելու համար:

«Թուրքիան իբրեւ թէ դիւանագիտական քայլ է անում եւ Սերժ Սարգսեանին հրաւիրում ինչ-որ մի շոգառման, որը ոչ մի կապ չունի Ապրիլի 24-ի հետ: Կարծում եմ՝ մինչեւ Ապրիլի 24-ը յարձակումները պարբերաբար կը շարունակուին, եթէ, ի հարկէ, նրանց չլռեց-



նենք: Այնուամենայնիւ, պաշտպանութեան նախարարութիւնը ծրագիր է մշակել, եւ պետք է միայն սպասել, չխանգարել», - ըսած է Զոմանտոսը: Ան նշած է նաեւ, որ, միւս կողմէն, հակառակորդը ճանչնալով հանդերձ, պետք ալ չէ եր-

կար սպասել, այլ այնպիսի գործողութիւններու դիմել, որ իրենք լռեն:

«Այս պահին մեզ պաշտպանուել պետք չէ, մենք պաշտպանուած ենք, մեզ պետք է քայլեր անել, որոնք ցոյց կը տան մեր ուժը: Իսկ իրենք այդ ուժը չունեն, այլ ունեն մեծ բանակ, շատ զենք, բայց բանակում ծառայողները՝ թալիշները, աւարները, իրենք իրենց տունն ու հայրենիքը չեն պաշտպանում, հասկանում էք, չէ՞: Ատրպէյճանը յատուկ խմբեր է պատրաստում, հէնց որոնք էլ զինուած յարձակում են եւ լարուած իրավիճակ ստեղծում», - ըսած է Թադեւոսեան:

Ների՛ր Հայաստան

«Մոսքովսքի Գոմսոմուլեց»-ում Սերկեյ Կապոնովը յօդուած է գրել՝ «Ների՛ր Հայաստան» վերնագրով, որում անդրադառնում է Կիւմրիի ողբերգական իրադարձութիւններին:

Հայաստանի խոշորագոյն քաղաքներում՝ Երեւանում ու Կիւմրիում մի քանի օր շարունակ տեղի են ունենում ցոյցեր՝ պահանջով 102-րդ ռազմապահպան զինծառայող Վալերի Փերմեաքովին յանձնել տեղի արդարադատութեանը:

Փերմեաքովին կասկածում են Աւետիսեանների ընտանիքի սպանութեան իրականացման մէջ: Դրա հետեւանքով զոհուել են Աւետիսեանների ընտանիքի 6 անդամները: Եօթերորդ զոհը 6 ամսական երեխայ է, որին ենթադրեալ յանցագործը հարուածել է դանակով կրծքին: Նա գտնուում է ծանր վիճակում: Ընդ որում՝ «ենթադրեալ» բառը այստեղ կատարում է ֆորմալ գործառնոյթ: Մարդն ի հարկէ անմեղ է, քանի դեռ դատարանում չի ապացուցուել հակառակը, իսկ հետաքննութիւնը պաշտօնապէս դեռ չի ավարտուել, ու դժուար դա վաղը տեղի ունենայ: Սակայն բոլորին, ով գտնուում է դէպքի վայրում, այդ թւում քննիչներին պարզ է, որ մարդասպանը հենց Վալերի Փերմեաքովն է:

Զգիտեմ՝ արդեօք Մոսկուայում Հայաստանի դեսպանատան պատերի մօտ կա՞ն ծաղիկներ, վառո՞ւմ են մոմեր: Լաւ է, եթէ դա այդպէս է: Իսկ եթէ ո՞չ: Պարզապէս ոչ ոք, ոչ մի ռուսական ՉԼՄ չի յայտնում այդ փաստի մասին: Ինչ-որ սուր անարդարութիւն է: Երբ ահաբեկիչները 12 մարդու սպաննեցին Փարիզում, Մոսկուայում ֆրանսական դեսպանատան մօտ գնացին մարդիկ՝ անկեղծօրէն ցաւակցելով զոհուածների ընտանիքներին ու ամբողջ Ֆրանսիային, նրանց շարունակ ցոյց էին տալիս հեռուստատեսութեամբ: Իսկ այստեղ կարծես թէ ոչ ոք Ռուսաստանում չգիտի Կիւմրիի մասին: Կամ հարցն այն է, որ սպաննուել են ոչ թէ ֆրանսացիներ, այլ հայե՞ր: Ափսոս, Մոսկուայից հեռու եմ այս պահին, այլապէս ինքս ծաղիկներ կը տանեի՝ անպայման:

Կիւմրիում սպանութիւնը պատմութիւն է՝ կապուած երկու երկրների՝ Ռուսաստանի ու Հայաստանի հետ: Եթէ ինչ-որ մէկը տեղեակ չէ՝ Հայաստանի ԽՍՀՄ նախկին երկրներից միակն է, որը շարունակում է անկեղծ ձգուել դէպի Ռուսաստանը...: Ու միայն Հայաստանն է մինչ օրս մեզ հաւատարիմ ընկեր մնում: Փաստացի ռուսական ռազմապահպան Կիւմրիում է գտնուում հենց այդ պատճառով: Հնարաւոր է միայն այն, որ հայ հասարակութեան ճնշման տակ յանցագործին կը յանձնեն տեղի արդարադատութեան ձեռքը, ու եթէ դա տեղի ունենայ, դա ոչ մի վայրկեան չի վկայի Ռուսաստանի թուլութեան մասին, այլ ընդհակառակը:

Ես կարծում եմ, որ «մեր» այդպիսի մարդկանց կարելի է յանձնել: Անգամ հարկաւոր է: Մանաւանդ խօսքը եղբայրական ժողովրդի ու դաշնակից պետութեան մասին է: Այդ իսկ պատճառով, եթէ դա չարուի, ապա Ռուսաստանը կարող է կորցնել ոչ թէ մարդասպանի, այլ բարեկամ երկրի: Հայաստանում տաք գլուխներն արդէն դուրս են գալիս միթիւնկների հակառուսական կարգախօսներով, ինչ-որ մէկը անգամ փորձել է այրել Ռուսաստանի դրօշը: Ու այդ մարդկանց կարելի է հասկանալ: Նրանք չեն ցանկանում, որ իրենց երկրում թափուի իրենց անմեղ համաքաղաքացիների արիւնը: Դժուարին իրավիճակում է յայտնուել նաեւ տեղի ռուսամետ իշխանութիւնը, որը կարող է կորցնել ժողովրդի վստահութիւնը:

Սակայն Փերմեաքովին քննութեան ու դատի համար Հայաստանին յանձնելը, կարծում եմ, քիչ է: Հայաստան պետք է թռչեն ու ներողութիւն խնդրեն աստիճանով աւելի բարձր մարդիկ, քան նախարարի տեղակալը՝ մանաւանդ, որ նա լիազօրուած չէ դա անել երկրի անուսից: Մեր բարձրաստիճան պաշտօնեաները պետք է հանդիպեն թէ՛ Հայաստանի նախագահի, թէ՛ մարդկանց հետ: Բառեր գտնեն: Ու ոչ միայն: Եւ վերջապէս դեսպանութիւն պետք է գնան, այնտեղ պետք է դրուած լինեն ծաղիկներ, ու վառուեն մոմեր: Սա արդէն ոչ թէ պետութեանը, այլ մեզ բոլորիս է ուղղուած:

Ահա այդ ժամանակ մենք կը դադրենք կորցնել ընկերների, մարդկանց ու պետութիւններ: Ու ես այդ ժամանակ կը տեսնեմ, որ իմ Ռուսաստանն իսկապէս մեծ կայսրութիւն է: Իսկ մինչ այդ ես անձամբ եմ հայերից ներողութիւն խնդրում: Ներեցե՞ք ինձ, եղբայրներ...:

Ռապըրթ Ֆիսքի ծանր քննադատութիւնը 24 Ապրիլի Չանաքքալէի պատերազմի որոշումին դէմ

24 Ապրիլին Չանաքքալէի մէջ հաւաքուելով Չանաքքալէի պատերազմին հարիւրամեակը նշելու որոշումը ամբողջ աշխարհի մէջ կը շարունակէ տեղի տալ խիստ ու կարծր հակազդեցութիւններու: Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Էրտողանի կողմէ այս ուղղութեամբ աշխարհի մեծամեծերուն ղրկուած հրաւերը, այնպիսի թուականի մը երբ անդին Հայաշխարհը պիտի նշէ 1915-ի հարիւրամեակը՝ ոմանց կողմէ շատ յանդուգն, ոմանց կողմէ ալ ամօթալի նկատուեցաւ արտասահմանի մէջ: Այս որոշումին դէմ բաւական ծանր յօդուած գրողներէն մէկն է անգլիական Ինտիփիէնտենթ թերթի Միշին Արեւելքի նշանաւոր մասնագէտ Ռապըրթ Ֆիսքը: Ֆիսք հրատարակեց գրութիւն մը որուն խորագիրն իսկ շատ ծանր է. «Հայոց ցեղասպանութիւնը թաքցնելու ուղղուած ամօթալի ձեռնարկ»: Ըստ Ֆիսքի, աշխարհի առաջնորդները եթէ ծրագրեն նշել Չանաքքալէի պատերազմի հարիւրամեակը, այն ատեն կը ստեղծուի ուրիշ շատ ծանր թուականի մը հարիւրամեակը անտեսելու վտանգ մը:



Ֆիսք կ'ընէ հետեւեալ մեկնաբանութիւնը. «Երբ աշխարհի գանազան մեծամեծերը, որոնց կարգին Իշխան Չարլզ կամ Աւստրալիոյ ու Նոր Զելանտայի վարչապետները Թուրք կառավարութեան հրաւերով Չանաքքալէի մէջ պիտի հաւաքուին Ա. Աշխարհամարտի պատերազմը նշելու համար, այն ատեն անոնց հետ միասին պիտի քալեն նաեւ մեկուկէ միլիոն քրիստոնեայ Հայերու ուրուականները»: Ռապըրթ Ֆիսքի համաձայն Չանաքքալէի պատերազմին տարեդարձը 24 Ապրիլին նշելու որոշումը «դիւանագիտական անօրինակ խենդութեան արարք»

մըն է: Ֆիսք, յիշեցնել վերջ թէ Թուրքիա 102 երկիրներու առաջնորդներուն, նաեւ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանին հրաւեր ուղղած է, կը նշէ որ 2013 թուականին, այդ օրերու Հանրապետութեան Նախագահ Ապտուլլահ Կիլ 18 Մարտին Էր որ նշած է Չանաքքալէի պատերազմին 98րդ տարեդարձը: Այդ օրերուն ո՛չ մէկը ըսած էր որ Չանաքքալէի պատերազմի տարեդարձը պետք է նշուի 24 Ապրիլին:

Դաւիթ Պապայեան խօսած է Ատրպեյճանի հերթական դարձած սադրանքներուն մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի խօսնակ Դաւիթ Պապայեան վերջերս խօսելով սահմանին վրայ տիրող լարուածութեան մասին նկատել տուած է, թէ Իլիամ Ալիեւի վարչախումբը ունի մէկ նպատակ, որն է խուճապի մատնել հայ ժողովուրդը:

Պապայեան նաեւ նկատել տուած է, թէ սահմանին վրայ տիրող լարուածութիւնը պատահական չէ, այլ մագլցում արձանագրած էր տօնական օրերէն սկսեալ եւ կ'երկարի մինչեւ օրս: Պապայեան նաեւ վստահեցուցած է, որ հայկական կողմը համապատասխան ձեւով պատասխանած է ատրպեյճանեան սադրանքներուն եւ պիտի շարունակէ իր առաքելութիւնը քաջութեամբ իրականացնել:

Logo: ԱԳԱԳԷՅ
Շարքարքերք
ABAKA
Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251
Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5
Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԵՂԳԱԼԵԱՆ
Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻՒ ՄԱԿԿՈՍԵԱՆ
Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍԵՍ Բ. ՄԱՄՈՒԲԵԱՆ
Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”
Canada

ՀՐԱՆՂ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ 8-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՈԳԵԿՈՉՈՒԵՑԱՒ` ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՉԱԿԵԱՆ

«Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, լրագրող Հրանդ Տինքի ողբերգական մահուան 8-րդ. տարելիցին առթիվ կազմակերպուած էր զանազան ձեռնարկներ, այս ծիրէն ներս, 18 Յունուար 2015 Կիրակի առաւօտ, Գանատահայոց թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. պատարագի ընթացքին հոգեւոր հովիւներ յաւուր պատշաճի իրենց քարոզները կեդրոնացուցին Հրանդ Տինքի սպանութեան վրայ, ապա ողբացեալի հոգւոյն ի հանգիստ կատարուեցան մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօններ: Մինչ այդ Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ վերջերս Հայաստանի Կիւմրի քաղաքին մէջ պատահած ողբերգական սպանութեան զոհերուն, ինչպէս նաեւ Յովհաննէս եւ Սկրտիչ Էսաեան եղբայրներու, Էսաեան Վարժարանի անդարձ բաժնուած Տնօրէններու, ուսուցիչներու եւ սաներու հոգիներուն ի հանգիստ:

Այս հանդիսութիւններու կարգին, յետ միջօրէին նախաձեռնութեամբ՝ Պոլսահայ Մշակութային Միութեան, Նոր Սերունդ Բարեսիրական Միութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Համագործակցային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, Հայ Կեդրոնի սրահին մէջ Մեծ Եղեռնի Հարիւրամեակին եւ Հրանդ Տինքի մահուան ութերորդ տարելիցին նուիրուած մասնաւոր ոգեկոչման յուշահանդէս մը կազմակերպուած էր: Այս առթիւ որպէս պատգամաբեր Պոլիսէն յատկապէս հրաւիրուած



Ֆէթիյէ Զէթին

Հայ Հորիզոն հեռատեսիլէն, քաղաքիս մէջ գործող բոլոր հեռատեսիլի կայաններու ներկայացուցիչները ներկայ գտնուեցան, որոնք սփռեցին լուրը իրենց կայաններէն:

Կազմակերպիչ միութիւններու անունով ողջոյնի խօսքով հանդէս եկաւ քաղաքիս ծանօթ ազգայիններէն գործիչ-գրող Րաֆֆի Պետրոսեան որ հանգամանօրէն վարեց երեկոն: Ան յայտնեց թէ ձեռնարկը պիտի ըլլայ թարգմանաբար անգլերէն լեզուով:

Խորհրդաւոր «Տէր Ողորմեա»-ի երգեցողութեամբ եւ մոմավառութեամբ Հրանդ Տինքի եւ խօսքի ազատութեան դէմ վերջերս Փարիզի «Շարլի Հէպտօ» երգիծաթերթի խմբագրութեան վրայ կատարուած ահաբեկչական արարքին իրենց կեանքը կորսնցնող լրագրողներու յիշատակին յօտնկայս մէկ վայրկեան լռութիւն պահուեցաւ:

Րաֆֆի Պետրոսեան տեղեկու-

հանդէս եկաւ մեր երիտասարդ սերունդի արժանաւոր ներկայացուցիչներէն սփրանօ Լին Անոյշ Իշմար, որ վերջերս բեմերու վրայ յաճախ կը վայելենք զինք: Ան բացառիկ գեղեցկութեամբ, վճիտ առողջութեամբ ու ապրումով մեկնաբանեց Կոմիտասի «Անտունի» եւ բանաստեղծութիւն՝ Յովհաննէս Շիրազի, երաժշտութիւն Մաժակ Թոշիկեանի «Տեսնեմ Անի»



Րաֆֆի Պետրոսեան

ու մոր մեռնեմ» կտորները, դաշնակի ընկերակցութեամբ երաժիշտ Լենա Պէյլէրեանի, արժանանալով հանդիսատեսներու անվերապահ բուռն ծափահարութիւններուն:

Րաֆֆի Պետրոսեան հակիրճ տողերու մէջ ներկայացուց եւ կենսագրականը տուաւ օրուայ պատգամաբեր Ֆէթիյէ Զէթինին, ան յայտնեց թէ փաստաբանն էր Հրանդ Տինքի, կը պաշտպանէր զինք կառավարութեան կողմէ իրեն դէմ բացուած դատերուն, որոնք մինչեւ օրս կը շարունակուին, ինչպէս նաեւ ներկայիս փաստաբանն է ընտանիքին:

Ֆէթիյէ Զէթին ժպիտը իր դէմքին հայերէն խօսքերով ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին, իր թրքերէն պատգամը Րաֆֆի Պետրոսեանի կողմէ տեղւոյն վրայ գեղեցկօրէն անգլերէնի թարգմանուեցաւ: Ան մասնաւորաբար անդրադարձաւ 1915-ի դէպքերուն, իր մեծ մօր յուշերուն եւ Հրանդ Տինքի ոճրագործութեան զարգացումներուն:

Ֆէթիյէ Զէթին իր հրատարակած «Իմ մեծմայրս» գրքին մէջ անդրադարձած էր թէ, երբ ինք 9 տարեկան էր, առաջին անգամ կը լսէր մեծ մօրը պատմութիւնը 1915-ի եղեռնի, մահուան կարաւաններու, տառապանքներու եւ հետեւաբար առանձնութեան ենթարկուելու մասին: Մեծ մօրը պատմած դէպքերը եւ անունները սկսած էր գրի առնել: Մեծ մայրը յստակօրէն կը յիշէր անունները եւ տեղի ունեցած դէպքերը, հակառակ բոլոր ջանքերուն, ան իր ընտանիքը եւ պատահարները չէր մոռցած, որովհետեւ վաթսուն տարիներ շարունակ մտքէն կրկնած էր: Ֆէթիյէ Զէթին յայտնեց թէ, այս պատմութիւնը սկսած էր պատմել իր բարեկամներուն, բոլորն ալ հայ ցեղասպանութեան վերաբերեալ իրենց որոշ յուշերը ու պատմութիւնները ունէին: Երկար տարիներու ընթացքին որքան ալ անոնք փորձած էին ջնջել այս անտանելի յուշերը, անոնք մնացած էին կենդանի:

Ֆէթիյէ Զէթին յատկապէս նշեց ըսելով՝ «1915-ի վերաբերեալ դէպքերու նկատմամբ թրքական պաշտօնական քաղաքականութիւնը եղած է մոռնալ բոլոր պատահարները, սակայն բոլոր օրէնքներու եւ արգելքներու, մոռնալու քաղաքականութիւնը գործադրելի եւ կարելի չէ: Երբ պետութիւն մը որ անհատներու վրայ կը ստիպէ իր անարդար մոռացումի քաղաքականութիւնը, մոռացումի քաղաքականութիւնը կը վերածուի յիշելու քաղաքականութեան: Հակառակ երկար տարիներու մոռացումի քաղաքականութեան ու անցեալի հետքերը ջնջելու ջանքերուն անկարելի է տեղական յուշերը անհետացնել»: Օրինակ մը բերելով Ստեֆան Ջուէիկէ, յայտնեց թէ «Այնքան ատեն որ խիղճը կը յիշէ՝ որեւէ մէկ յանցանք չի մոռցուիր»: Ան շարունակելով իր խօսքերը ըսաւ «Ժամանակը բեռը չի թեթեւցներ, ընդհակառակը ալ աւելի կը ծանրացնէ, քանի որ մորերը կը դիզուին: Մեր խիղճերը քաւութեան, իսկ մեր հոգիները բուժումի կը կարօտին: Թուրք ժողովուրդը ստիպուած է յիշելու եւ ճշմարտութիւնը ընդունելու, յիշողութիւնը կը շարունակէ պայքարիլ մոռացումի դէմ: Իմ երկրիս մէջ այս պայքարին մեծագոյն դէմքն է Հրանդ Տինքը, որովհետեւ Հրանդը իր անխախտ կեցուածքով շարունակ իրենց յիշեցուց անցեալը, որը իրենք կ'ուզէին անհետացնել ի գին ամէն ծիգերու: Հրանդը անցեալին իրականութիւնները ոչ միայն պետութեան էր որ կը յիշեցներ, այլ նաեւ այս երկրին ժողովուրդին, բարեկամներուն, իր հետ շփում ունեցողներուն, ընթերցողներուն եւ բոլոր հետեւողներուն: Հրանդը սպանցեցին որովհետեւ ան հասած էր այն գծին ուր կը խաչաձեւէր պետութեան սուկումի ու բացարձակ արգելքներու սահմանափակութեան: Ան կը պահանջէր իր բնական երկրին ժողովրդավարական բոլոր կանոններուն եւ հաստատութիւններուն ամրութիւնը, զինքը հալածեցին երբ ուրիշներուն չկարողացան հալածել:»

Ֆէթիյէ Զէթին Հրանդ Տինքի մարդասպանութեան ամենամօտ վկաններէն մին ինք եղած էր, յատկապէս շեշտեց թէ երկար տարիներու դատավարութեան ընթացքին իր կողքին էի, իր մարդասպանութեան ծրագրումի շրջանն էր, իմ ապացոյցը հիմնուած է իմ ակամատեսութեան վրայ: Այս ոճիրի վերաբերեալ վկայութիւնս, տեղեկութիւններս, կարծիքներս, տեսութիւններս թէ դատավարութեան եւ թէ դատախազութեան ներկայացուցի, սակայն դժբախտաբար բոլոր ջանքերս մնացին բազմաթիւ կազմարարներու եւ դատական թղթածրարներու մէջ եւ կամ դարձան լոկ օրակարգի նշանագրութիւններ: Մեր պատմութեան մէջ բազմաթիւ են քաղաքական մարդասպանութիւններ եւ ոճիրներ որոնք երբեք չեն լուծուած: Մահէն առաջ Հրանդ Տինքին փաստաբանն էի, իսկ մահէն ետք կը շարունակեմ պարտականութիւնս իբր իր ընտանիքին փաստաբանը:

Ֆէթիյէ Զէթին իր խօսքերը հետեւեալ կերպով ւաւարեց «Կ'ուզեմ ձեր ներկայութեան անգամ
Շար. էջ 14



Լուսանկարներ: Տարութիւն Դերմակեան

Սոփրանօ Լին Անոյշ Իշմար

էր Հրանդ Տինքի փաստաբան, գրող, մարդկային իրաւունքներու պաշտպան եւ մեծ եղեռնէ ազատած հայ մեծ մօր թոռնիկը «Իմ մեծմայրս» գրքի հեղինակ Ֆէթիյէ Զէթին:

Ձեռնարկին ներկայ էին Հոգեւոր Հովիւներու կողքին, նախկին յոյն երեսփոխան Ճիմ Քարիճիանիս, քաղաքիս կուսակցութիւններու, միութիւններու ու եկեղեցիներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայ Կեդրոնի ընդարձակ սրահը լեցնող 700 հոգիէ աւելի խումբերու բազմութիւն մը, որոնցմէ շատեր առանց տեղ գտնելու ոտքի կը հետեւէին հանդիսութեան: Այս հետաքրքրական երեկոյթին բացի

թիւններ փոխանցեց Հրանդ Տինքի սպանութեան մասին, թէ Հրանդ ինչպէս թիրախ դարձաւ ազգայնամոլ խորունկ պետութեան ուժերու, երբ սկսաւ համարձակօրէն բացայայտել իրականութիւններ 1915-ի դէպքերուն եւ հետեւանքներուն մասին: Մէկ կողմէ խորունկ պետութեան ուժերը մտադրեցին եւ կազմակերպեցին Հրանդին ոճիրը, միւս կողմէ պետութեան ուժերը անտարբերօրէն դիտեցին եւ հետեւեցան ոճրին կազմակերպման եւ իրագործման, առանց որեւէ ապահովութեան միջոցներ ձեռք առնելու:

Գեղարուեստական բաժնին մէջ օրուայ պատշաճ երկու երգերով

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ՍԵՐՅՈՒԺԱՅ ԱԲԵՏԻՍԵԱՆԻ ՄԱՅՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի սգակիր հարազատներ
եւ ժողովուրդ,

Վիշտ եւ տրտմութիւն է ամեն-
քիս սրտերում փոքրիկ Սերյոժայ
Աւետիսեանի մահուան տխուր
առիթով:

Կիւմրիում Աւետիսեան ընտա-
նիքի սպանութեան վշտին մեր
հոգում յաւելուեց նաեւ ընտանիքի
փոքրիկ կորստի ցաւը: Սգում
ենք ամենքս այս դժուարին պահին
եւ աղօթում փոքրիկի հոգու խաղաղութեան եւ հանգստութեան հա-
մար՝ խնդրելով, որ Տերը երկնքի լուսեղէն օթեւաններում ընդունի
ննջեցեալ մանկան լոյս հոգին:



Միասնաբար պիտի դիմակայենք այս ողբերգութեանը, որ ցնցեց
ամենքիս, նաեւ պատճառ դարձաւ տագնապների ու յուզումների:
Տոկունութեամբ ու խոհեմութեամբ տանենք այս վիշտը, զերծ մնանք
ցնցումներից եւ ցաւն ու սուգը յաղթահարենք առ Աստուած հա-
ւատով՝ յարգանքի մեր տուրքը մատուցելով լուսահոգի մեր հայրենա-
կիցների յիշատակին:

Աղօթում ենք վերստին Աւետիսեան ընտանիքի զոհուած ան-
դամների հոգուոց հանգստութեան համար, որպէսզի Տերը արար-
չական Իր սիրով արժանացնի յաւիտենական կեանքի երանութեանը
եւ Սուրբ Զոգով մխիթարի վշտացեալ բոլոր սրտերը:

Առ Բարձրեալն Աստուած Մեր հայցն ենք վերառաքում, որ այլեւս
նման փորձութիւններ չտեսնի հաւատաւոր մեր ժողովուրդը եւ ապրի
խաղաղութեան ու ապահովութեան մէջ:

Թող Տերը զօրակից լինի մեզ եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պա-
հի ու պահպանի ազգս հայոց:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:

Ս. Գրիգոր Նարեկացին եկեղեցական դոկտորի կոչման պիտի արժանանայ

Վատիկանի մէջ կ'աւարտի Սուր-
բերու միաբանութեան ժողովը,
որուն ժամանակ անհրաժեշտ քայ-
լեր ձեռնարկուած են Զոմփի Պապի
յայտարարութեան համար, որով ան
պիտի յայտնէ, թէ ով պիտի ստանայ
եկեղեցական դոկտորի կոչում: Այս
մասին կը գրէ Panorama.am-ը՝
վկայակոչելով infocatolica.com
կայքը:



Այդ կոչումը կը տրուի վաս-
տակաւոր աստուածաբաններու:
Այս անգամ այդ կոչման պիտի
արժանանայ Սուրբ Գրիգոր Նարե-
կացին: Չայն Կաթոլիկ աշխարհի
մէջ կը համեմատեն Սուրբ Օգուս-
տինի հետ՝ հաշուի առնելով առա-
ջին հերթին ոչ թէ աշխատութիւն-
ներու քանակը, այլ ազդեցութիւնը
հաւատացեալներու մէջ:

Կայքը մանրամասն կ'անդրա-
դառնայ Նարեկացիի կենսագրու-
թեան: Կը նշուի, որ ան մեծապէս
նպաստած է հայ առաքելական
եկեղեցւոյ զարգացման: Կայքը կը
գրէ, որ Նարեկավանքը, ուր ուսա-
նած է Գրիգոր Նարեկացին, 1915
թուականին Զայոց Տեղասպանու-
թեան ժամանակ հիմնովին աւեր-
ուած է, իսկ 1915-23 թուականնե-

րուն Զայոց ցեղասպանութեան զոհ
զացած է 1,5-2 միլիոն հայ:

Infocatolica.com-ը կը գրէ, որ
Նարեկացին ականաւոր աստուա-
ծաբան է եւ հայ գրականութեան
լաւագոյն ներկայացուցիչներէն
մէկը: Անոր ստեղծագործութիւն-
ները թարգմանուած են շատ լե-
զուներով, իսկ 1984 թուականին
երգահան Ալֆրետ Շնիթկէն Նա-
րեկացիի բանաստեղծութիւններու
հիման վրայ գրած է երաժշտական
գործ երգչախումբի համար:

Ալպերթօ Ռոխոյի յօդուածը կ'ա-
ւարտի "Մատեան ողբերգութենէն"
մէջբերումով:

Տեղասպանութեան 100-ամեակի ծիրէն ներս Զայոց Առաջնորդարանը արժանին մատուցեց Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան



Զախէն՝ Տոթթ. Եաղսրզեան, Պրն. Սիւնանեան եւ Պրն. Գարակեօզեան

Պըրպէնք - Կիրակի, Յունուար 18-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր
Տաճարին մէջ Սուրբ եւ Ամմահ Պատարագի աւարտին երախտագիտու-
թեամբ արժեւորուեցաւ ազգային ամենամեծ կազմակերպութիւններէն՝
Զ.Բ.Ը.Մ.-ի դերն ու մատուցած նպաստը հայ ժողովուրդին:

Գլխաւորութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի եւ Ս.
Էջմիածինէն հիւրաբար ներկայ գտնուող եւ պատարագող Գերշ. Տ. Մուշեղ
Եպս. Բաբայեանի, ներկայութեամբ Զ.Բ.Ը.Մ.-Յ.Ե.Ը.Մ.-ի սկաուտներու,
միութենականներու եւ հաւատացեալներու, հոգեւոր հայրերը վեր առին
Միութեան աշխատանքները, ծրագիրներն ու իրագործումները, որոնք
1906-էն ի վեր կը բաշխուին հայութեան: Զոգեհանգստեան արարողութե-
նէն ետք, սրտի եւ երախտիքի իր խօսքը փոխանցեց Լոս Անճելըսի
Քաղաքային Խորհուրդի անդամ Պրն. Փօլ Գրիգորեան, որմէ ետք սկաուտ-
ներուն գլխաւորութեամբ թափօրը դուրս եկաւ նորաօծ Ապրիլեան յու-
շարձան, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում եւ յարգանք՝ մեկուկէս
միլիոն նահատակներուն յիշատակին:

Ապա, Զ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու Զամախմբումին հրաւերով տեղի ունեցաւ
ընդունելութիւն, ուր Միութեան փոխ-ատենապետ Պրն. Սիւնան Սիւնանեան,
Արեւմտեան շրջանի ատենապետ Պրն. Գրիգոր Գարակեօզեան եւ
Ասպետներու ատենապետ Տոթթ. Յարութ Եաղսրզեան շնորհակալութիւն
յայտնեցին Առաջնորդ Յովնան Սրբազանին, ցուցաբերուած այս յատուկ
յարգանքին համար: Վերջինս, անգամ մը եւս կարեւորեց Զ.Բ.Ը.Մ.-ի
մատուցած համահայկական օժանդակութիւններն ու ծրագիրները:

Անկելա Մերթել՝ «Գերմանիան կը ձգտի ԼՂ խնդրի կարգաւորման հարցով միջնորդ դառնալ»



Գերմանիան հանդէս կու գայ
Լեռնային Ղարաբաղի խնդրի խա-
ղաղ կարգաւորման օգտին եւ կը
ձգտի սեփական ներդրումը ունենալ
այդ գործընթացին մէջ: Ինչպէս կը
հաղորդէ Tert.am-ը՝ վկայակոչելով
"Ինթերֆաքս" գործակալութիւնը,
այդ մասին յայտարարած է Գեր-
մանիոյ վարչապետ Անկելա Մեր-
թելը:

"Գերմանիան կը ձգտի հակա-
մարտութեան կարգաւորման հար-
ցով միջնորդի դեր ստանձնել: Մենք
կը կարծենք, որ Եւրոպայի խոր-
հուրդը, Եւրոպական միութիւնը
կրնան այս ուղղութեամբ նախա-
ձեռնութեամբ հանդէս գալ, որոշակի
ներդրում ունենալ հակամարտու-
թեան կարգաւորման հարցով: Ատոր
համար Ատրպէյճան կը բանակցի
Եւրոյան ձեռնարկին հետ", - ըսած է

ան՝ Ատրպէյճանի նախագահին հետ
համատեղ մամուլի ասուլիսի ըն-
թացքին:

Մերթել ընդգծած է, որ Գեր-
մանիան ԵԱՀԿ Մինսկի խումբի
անդամ է եւ կ'աջակցի Զայաստանի
ու Ատրպէյճանի բանակցութիւն-
ներուն, որոնք տեղի կ'ունենան հա-
մանախաղաղ երկիրներու՝ Ֆրանս-
սայի, Ռուսիոյ եւ ԱՄՆ-ի միջնոր-
դութեամբ:

"Կը կարծենք, որ այդ հակա-
մարտութիւնը միայն մէկ ճանա-
պարհ ունի՝ խաղաղ: Զրադադարի
յաճախակի խախտումները բա-
ցասական փաստ են: Կը կարծեմ՝
ատոր մէջ որոշակի դերակատա-
րութիւն ունի Ռուսիան: Ես պար-
զապէս պիտի ցանկանայի ընդգծել
ատիկա", - ըսած է Մերթել:

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԵՆ

ՏՈՔԹ. ԲԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԿԸ ՄԵԾԱՐՈՒԻ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ

ՅԱԿՈՒՔ ՎԱՐԳԻՎԱՌՔԵԱՆ

Քսան տարիներու վրայ երկարող գնահատելի մարդասիրական եւ ազգանուեր աշխատանք մըն է որ կը կատարէ Ամերիկահայ այս միութիւնը, որուն կ'անդամակցին հայ բժիշկներ, բուժքոյրեր, ատամնաբոյժներ, դեղագործներ, բժշկական ոլորտի մէջ եղող գիտնականներ: Ու իրենց հիմնադրութեան 20-րդ տարեդարձին առթիւ կազմակերպուեցաւ կալա հանդիսութիւն-ճաշկերոյթ Նոյեմբեր 21, 2014-ին, Նիւ Եորքի ամենանշանաւոր հաւաքատեղիներէն «Նիւ Եորք Աթլետիք Գլապ» ակումբին

խազահ, Տոքթ. Արթիւր Քիւրիկեան, փոխ նախագահ, Տոքթ. Յովն Գոճաօղանեան, ատենադպիր, Տոքթ. Քնարիկ Խաչատուրեան, հաղորդակցութեանց քարտուղար, Տոքթ. Կարպիս Պայտար, գանձապահ, Տոքթորներ Լուիզա Քիւրիկեան, Արամ Գազարեան, Լին Չեթին, Քիմ Յեքիմեան, Բաֆֆի Յովհաննէսեան, Վիգէն Փամուբեան, Դերենիկ Թերճանեան եւ Խորէն Նալպանտեան, խորհրդականներ: Այս հանդիսութիւնը հովանաւորեց Միութեան պատուոյ նախագահը, Նիւ ճրրգիաբնակ ազգային մեծ բարերար Տեր եւ Տիկին Նազար եւ Արտեմիս Նազարեանները:

Օրուան յայտագրին բացումը



մէջ, ուր լեցուցած էին սրահը ոչ միայն անդամներ, այլեւ՝ համակիրներ ու բարեկամ ազգայիններ: Այս միութեան տնօրէն խորհուրդին կ'անդամակցին՝ Տոքթ. Լորընս Նաճարեան, նախագահ, Տոքթ. Թորոս Զաղլասեան, նախկին նա-

կատարեց միութեան նախագահ Տոքթ. Լորընս Նաճարեան, որ իր կարգին նուիրատուութեամբ մը կը մասնակցեր տեղի ունեցող նուիրատուութեանց կոչին: Օրուան հանդիսավարն էր Նիւ ճրրգիաբնակ ազգային բարերար Յակոբ Գու-

յումճեան: Հանդիսութիւնը սկսաւ պետական գոյգ քայլերգներով կատարողութեամբ՝ Նանոր Թերճանեանի: Բացման աղօթքը կատարեց Ամերիկայի Հայոց Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեան: Այս հանդիսութեան յանձնախումբին ատենապետը՝ Տոքթ. Արամ Ղազարեան ներկայացուց միութեան քսան տարիներու ճանապարհը եւ որուն յաջորդեց Տոքթ. Լ. Նաճարեանի պաշտօնական խօսքը: Ներկայացուեցաւ տեսաերիզ մը միութեան կատարած լայնածաւալ աշխատանքին նուիրուած: Այս առթիւ պատուուցեան միութեան երկու հիմնադիրներէն՝ Տոքթ. Նահապետ Գասապեան եւ դեղագործ Խորէն Նալպանտեան, որոնց յանձնուեցան յուշատախտակներ եւ որոնք իրենց կարգին սրտի խօսքով ունեցան յաւուր պատշաճի ելոյթ: Հունկ հրաւիրուեցաւ օրուան մեծարեալը՝ «դեսպան մարդա-

սիրութեան եւ բժշկութեան» կոչումով ներկայացուած Նիւ ճրրգիաբնակ ազգային բարերար Տոքթ. Բաֆֆի Յովհաննէսեան: Ան յուզումով ընդունեց իրեն եղած մեծարանքի այս արտայայտութիւնը: Այս առթիւ իրեն շնորհուեցաւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի «Մովսէս Յերացի» մետալը, որ յանձնեց ՀՀ Միացեալ Նահանգներու դեսպան Տիգրան Սարգիսեան եւ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.-ի «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանն ու սրբատառ կոնդակը, զոր յանձնեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդը՝ Խաժակ Սրբազան: Ներկաները յոտնկայս դիմաւորեցին այս պարգևատրումները, որոնց լիովին արժանի է համայնքին կողմէ սիրուած մեծարեալ բժշկապետը: Ներկայ էին նաեւ ՄԱԿի մօտ ՀՀ հաւատարմատար Զօհրապ Մնացականեանն ու Անուշաւան Եպս. Դանիէլեանը:

Հայկ Դեմոյեան՝ «Հրապարակ հանելով Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութիւններու առաջին միջազգային հանդէսը՝ լուրջ յայտ կը ներկայացնենք ցեղասպանագիտութեան ասպարեզին»

Հինգշաբթի՝ 22 Յունուար 2015-ին, Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի դահլիճին մէջ տեղի ունեցած է Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին կողմէ թողարկուած «Յեղասպանագիտական հանդէս» եւ անգլերէն լեզուով «International Journal of Armenian Genocide Studies» պարբերականներու անդրանիկ համարներուն շնորհահանդէսը: Շնորհահանդէսին ողջոյնի խօսքով հանդէս եկած է թանգարան-հիմնարկի փոխտնօրէն, պատմական գիտութիւններու թեկնածու, հանդէսի գրախօսութիւններու բաժնի խմբագիր Սուրէն Մանուկեան: Պարոն Մանուկեան ներկայացուցած է ամսագիրներու ստեղծման եւ տպագրման հետ կապուած մանրամասնութիւններ: «Հայաստանում կար գիտական հանդէսի բաց, որը կ'ունենար նեղ մասնագիտական, գիտական ուղղուածութիւն: Հաշուի առնելով հայրուրամայ տարելիցի նկատմամբ հետաքրքրութեան աճը՝ որոշում կայացուեց հրապարակել հայալեզու «Յեղասպանագիտական հանդէս»-ը: Հայ եւ արտասահմանցի երիտասարդ գիտնականները կարող են իրենց հետազոտութիւնները հրապարակել այս ամսագրում: Իսկ անգլերէն ամսագիրը միջազգային ակադեմիական գործունեութեան կարեւորագոյն քայլ է», - ըսած է Սուրէն Մանուկեան:

Անոր խօսքով՝ ցեղասպանութեան ուսումնասիրութիւններուն նուիրուած միւս աշխարհի մէջ հրապարակուող երեք հեղինակաւոր ամսագիրները միայն որոշ չափով կը ներկայացնեն Հայոց Յեղասպանութիւնը: Անգլերէն լեզուով հանդէսը հնարաւորութիւն պիտի տայ Հայաստանի հայագիտական միտքը աշխարհին ներկայացնելու, ինչպէս նաեւ պիտի նպաստէ միջազգային մակարդակի հայկական ցեղասպանագիտական դպրոցի ձեւաւորման: Հանդէսները անվճար պիտի տրամադրուին աշխարհի ցեղասպանագիտական յառաջատար կեդրոններուն: Ելոյթ ունեցած է նաեւ ՀՀ ԳԱՀ Հնագիտութեան եւ ազգագրութեան ուսումնարանի առաջնակարգ գիտաշխատող, պատմական գիտութիւններու դոկտոր, Հայոց Յեղասպանութեան թանգարանի-հիմնարկի գիտական խորհուրդի անդամ Յարութիւն Մարութեան, որ ողջունած է ամսագիրներուն հրատարակումը եւ բարձր գնահատած անոնց մէջ առկայ յօդուածներուն մասնագիտական որակները: «Հանդէսները աչքի են ընկնում թեմատիկ բազմազանութեամբ, ինչը շատ ողջունելի է եւ կարելոր», - նշած է պարոն Մարութեան: Ձեռնարկը եզրափակած է Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած



ձեռնարկները համակարգող պետական յանձնաժողովի քարտուղար, պատմական գիտութիւններու դոկտոր, ամսագիրներու գլխաւոր խմբագիր Հայկ Դեմոյեան, որ իրադարձութիւնը որակած է պատմական եւ նշած, որ ամսագիրներուն առաջին օրինակներէն պիտի ուղարկուին թրքական համալսարաններուն եւ գրադարաններուն: «Հրապարակ բերելով Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութիւնների առաջին միջազգային հանդէսը՝ լուրջ յայտ ենք ներկայացնում ցեղասպանագիտութեան ասպարեզում: Թանգարանը եւս մէկ այցեքարտով է հանդէս գալիս միջազգային հանրութեանն իր անգլիալեզու հանդէսով, որն այլեւս իրականութիւն է», - նշած է Հայկ Դեմոյեան:

Յունաստանը խափանեց «Թալաթ Փաշա Կոմիտե»-ի հնարքը Աթենքի մեջ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Թրքական Աշխատանքային կուսակցության ղեկավար Տոդու Փերինչեքը անցեալ շաբաթ չյաջողեցավ Յունաստանի մեջ կրկնել տասը տարի առաջ Չուիցերիոյ մեջ իր կազմակերպած ժխտողական խաղը: Փերինչեքը ծրագրած էր իր սրբապիղծ «Թալաթ փաշա կոմիտե»-ի անդամներուն հետ միասին մեկնիլ Աթենք՝ վիճարկելու Հայոց ցեղասպանության ժխտումը արգիլող վերջերս ընդունուած յունական օրէնքը: Ան կ'երազէր «հերոս» դառնալ՝ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մեջ Յունաստանի դէմ հայց ներկայացնելով՝ օրէնքը խախտելու պատճառով ակնկալուող ձերբակալութենէն ետք:

Դեռ 2005 թուականին, Չուիցերիոյ ոստիկանութեան կողմէ կալանաւորուելէն ետք, Փերինչեքը մեղաւոր ճանչցուեցաւ Հայոց ցեղասպանութեան ժխտման համար: Երբ Չուիցերիոյ դաշնակցային դատարանը (Գերագոյն դատարանը) հաստատեց անոր պատիժը, Փերինչեքը 2008-ին դատավճիռը բողոքարկեց Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մեջ (ՄԻԵԴ): 2013-ի Դեկտեմբեր 17-ին ՄԻԵԴ-ի եօթը դատաւորներէն հինգը որոշում կայացուցին յօգուտ Փերինչեքի՝ պնդելով, որ Չուիցերիոյ դատարանները խախտած են անոր խօսքի ազատութեան իրաւունքը: Երեք ամիս անց Չուիցերիան ՄԻԵԴ-ի սխալ որոշումը բողոքարկեց դատարանի 17 անդամներէ բաղկացած Մեծ պալատին մօտ, որ կը նախատեսէ 2015-ի Յունուար 28-ին վերաքննել անելի առաջ ընդունուած դատավճիռը:

Բարեբախտաբար, Փերինչեքի ծրագրած հնարքը Յունաստանի մեջ բազմաթիւ արգելքներու հանդիպեցաւ... Նախ սկսիմք անկէ, որ ան չէր կրնար Թուրքիայէն դուրս գալ, քանի որ անոր վրայ ճամբորդական արգելք սահմանուած էր բանտէն պայմանական ազատելէն ետք՝ դաւադրութեան մասնակից ըլլալուն համար: Երբ առանց անոր իր կուսակցութեան 13 անդամներէ բաղկացած պատուիրակութիւնը ժամանեց Աթենքի օդակայան, Յունաստանի իշխանութիւնները խելամտօրէն որոշեցին խումբը վտա-

րել Թուրքիա, քան թէ տեսարան սարքել՝ զանոնք ձերբակալելով: Յունական ոստիկանութիւնը որպէս պատճառաբանութիւն օգտագործեց թուրք այցելուներու ճամբորդական փաստաթուղթերուն օրինաւոր չըլլալուն փաստը:

Պոլիս վերադառնալէն ետք արտաքսուած թուրքերը իրենց կուսակիցներուն կողմէ հռչակեցան որպէս «հերոսներ»: Փերինչեքը անմիջապէս մեղադրեց նախագահ Էրտողանն ու վարչապետ Տաւութօղլուն՝ իրենց «չափազանց խայտառակ որոշման» համար, որով կանխեցին անոր Յունաստան մեկնիլը՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար: Փերինչեքի հետեւորդները նաեւ մեղադրեցին Յունաստանի մէջ Թուրքիոյ դեսպան Քերիմ Ուրասը՝ յունական կառավարութեան հետ դաւադրութեան մեջ՝ խոչընդոտելով իրենց առաքելութիւնը: Ի պատասխան՝ թուրք դեսպան Քերիմ Ուրասը մեղադրեց «Թալաթ փաշա կոմիտե»-ի անդամները՝ իրենց սեփական ծրագիրները խանգարելու յանցանքով, անոնց մասին նախօրօք յայտարարելով, հակառակ դեսպանի յորդորին՝ անադմուկ ժամանելու Աթենք եւ միայն այնտեղ հասնելէն ետք յայտարարութեամբ հանդէս գալու... Ուրասը անելուց, որ թրքական պատուիրակութեան վաղաժամ հրապարակային յայտարարութիւններուն պատճառով յունահայ համայնքը Աթենքի մեջ բողոքի ցոյցի նախապատրաստուած էր անոնց դէմ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուր Չաւուշօղլուն պաշտպանեց Փերինչեքի՝ Յունաստան մեկնելու վերաբերեալ դատարանի արգելքը: Մամուլի ասուլիսի ժամանակ Չաւուշօղլուն հերքեց Փերինչեքի մեղադրանքը, թէ Անգարան փորձած է խոչընդոտել իր կոմիտեին ուղեւորութիւնը դէպի Յունաստան: Սակայն Փերինչեքին շատ անելի կարեւոր ուղեւորութիւն կը սպասուի Յունուար 28-ին, երբ կ'ակնկալուի, որ ան ներկայ գտնուի իր գործով Չուիցերիոյ բողոքարկման դատական նիստին ՄԻԵԴ-ի մեջ, Սթրազպուրկ: Թէեւ Փերինչեքի հետ ունեցած հեռախօսագրոյցի ընթացքին Չաւուշօղլուն ըսած էր, որ Թուրքիոյ կառավարութիւնը չ'առաքելեր անոր Սթրազպուրկ մեկնելուն, սակայն արտաքին գործոց նախարարը զգուշացուցած էր, որ Փերինչեքի ճամբորդական արգելքի վերաց-

ման վերջնական որոշումը դրուած է Թուրքիոյ Գերագոյն դատարանին վրայ: Անգարան այժմ պետք է հակակշռէ իշխող կուսակցութեան դէմ ծայրայեղ ազգայնական քննադատին աճող հեղինակութեան վնասը՝ ընդդէմ մոլեռանդ ժխտողականին աջակցելու առաւելութեան՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի ընթացքին:

Թրքական եւ միջազգային լրատուամիջոցները լայնօրէն տարածեցին նախորդ յօդուածներէն մեկուն մէջ իմ հաղորդած հրատապ լուրը, որով բացայայտուած էր, որ Ամալ Զլուկին ճէֆրի Ռոպրթսընի եւ այլ ակնառու փաստաբաններու հետ Հայաստանը պիտի ներկայացնէ ՄԻԵԴ-ի Յունուար 28-ի դատական նիստին: Տիկին Զլուկին այս դատական գործին ներգրաւուածութեան լուրը տարօրինակ արծագանգի արժանացաւ Փերինչեքի կողմէ, որ թրքական մամուլին ըսաւ. «Տիկինը կրնայ մասնակցիլ դատական նիստին, բայց եթէ անգամ Յիսուսի կինն ալ գայ, միեւնոյն է, յաջողութեան հասնելու հնարաւորութիւն չունի»...

Իմ վերջին յօդուածէս ետք քանի մը ընթերցողներ մատնանշած էին անծանօթ ընտանեկան կապը տիկին Զլուկինի (Ամալ Ռամգի Ալամուտին) եւ զուիցերիացի նշանաւոր միսիոներ «Պապա» ճաքոպ Քունցլերի միջեւ, որ յայտնի է որպէս «հայ որբերու հայր»: Մինչեւ Տեղասպանութիւնը, 25 տարի շարունակ Քունցլերը եւ անոր կինը ջանասիրաբար օգնած են հայ համայնքին, Ուրֆայի մէջ: Այնուհետեւ, 1920-ականներուն Քունցլեր ամուսինները սկսած են աշխատիլ Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցի համար՝ տարիանելով հազարաւոր հայ որբեր Թուրքիայէն դէպի Ղազիր, Լիբանան, ուր հայ աղջիկները գործած էին հանրայայտ «Սպիտակ տան գորգը», որ 1925 թուականին նուիրաբերուած էր Միացեալ Նահանգներու նախագահ Քալվին Զուլիճին: Քունցլերի դուստր Իտան ամուսնացած է Ամալի պապիկին՝ Խալիլ Ալամուտինի զարմիկ Նաժիպ Ալամուտինի հետ: 1970-ին Իտա Քունցլերը հրատարակած է ուշագրաւ գիրք մը իր հօր անձնուէր մարդասիրական գործունեութեան մասին՝ «Պապա Քունցլերը եւ հայերը» խորագիրով:

Ուրուկուէյի նախագահ Մուխիթա ընդունած է մաս կազմել Հայոց Տեղասպանութեան 100-ամեակի յայնձնախումբին

Աննախադէպ քայլով մը նախագահ Խօսէ Մուխիթա, Ուրուկուէյի պետական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, իր նախագահական պաշտօնի աւարտումէն ամիս մը առաջ, իբրև հրաժեշտի արտայայտութիւն, իր նախագահական պալատի մէջ ընդունեց հայ համայնքի թէ աշխարհիկ և թէ կրօնական կառոյցներու ներկայացուցիչներուն: Այս մասին յայտնած է Մօնթեվիտոյէն Կարօ Յէփմեան:

Նոյն հանդիպման ընթացքին, Հայոց Տեղասպանութեան 100-ամեակի առթիւ կազմուած Միացեալ Յանձնախումբին միանալու առաջարկին՝ նախագահ Մուխիթա առանց տատանումի սիրով ընդունած է առաջարկը եւ անելուցած է, որ ինք գիտէ թէ թուրքերը պիտի նեղանան, սակայն նշած է, որ եղածը Տեղասպանութիւն է և Թուրքիա քաջութիւնը պետք է ունենայ ինքնաքննադատութեան և ընդունելի կատարուած բարբարոսութիւնները:

Պետք է յիշել, որ նախագահ Մուխիթայի պաշտօնավարութեան այս վերջին հինգ տարիներու ըն-



թացքին, Հայաստանի և Ուրուկուէյի արդէն գոյութիւն ունեցած կապերը անելի ամրապնդուեցան, երբ նկատի ունենանք թէ իր նախագահութեան օրերուն էր, որ պետական օրէնքով ընդունուեցաւ Տեղասպանութեան թանգարանի կառուցումը, ինչպէս նաև այս տարւան սկիզբին էր երբ Ուրուկուէյի արտաքին գործոց նախարար Լուիս Ալմակրոն յայտարարեց, որ ԼԴՀ-ն պետք է միջազգային ճանաչում

ստանայ և իր ժողովուրդին տրուի ինքորոշման իրաւունք: Տակաւիս վերջերս Ուրուկուէյի փոխ-նախագահ Տանիօ Աստորին էր որ պաշտօնական այցելութեամբ Հայաստան գտնուեցաւ, իսկ 2014-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանն ալ ընդունուեց պետական ամենաբարձր մակարդակով: Ուրուկուէյի խորհրդարանի այն պատուիրակութիւնը, որ կը գլխաւորէր անոր նախագահ Խորխէ

In a paper published in *Foreign Affairs* magazine, Thomas de Waal makes the following statement: “When Turkish historians finally returned to the topic [of Genocide] in the late 1970s, they did so in response to a wave of terrorist attacks on Turkish diplomats in Western Europe, most of them carried out by Armenian militants based in Beirut. ... Turkish society has begun to revisit the dark pages of its past.”

This was one of the bloody stages of Armenians struggle which also had its unintended consequences.

Thus, a Spanish journalist, Jose Antonio Gurriaran, a contributor to the *Pueblo* newspaper, was injured by a bomb blast planted in a phone booth by Armenian youth. That incident sparked in him the interest to research and find out why the bomb was planted in the first place. He published a book titled *La Bomba*, and ever since, he has become an advocate for the recognition of the Genocide.

Similarly, the famous Turkish novelist Elif Shafak has discovered the Armenian Genocide in a traumatic way; growing up as the daughter of a Turkish diplomat, she shivered every time she heard the word Armenian for fear that her mother, a career diplomat, would get assassinated. Once she became older, she wanted to find out why Armenian youth were so intent on drawing Turkish blood. Later on, she featured the Armenian Genocide in one of her novels, *The Bastard of Istanbul*, and published it in defiance of the Turkish court.

We face 2015 with many unfulfilled dreams and projects. We have more problems to face than our dreams. The remains of the Genocide victims are not yet buried, nor is their quest for justice attained. The struggle is ahead of us. Some historians and editorialists tell the public that we have crossed a stage of recognition and we need to concentrate on compensation. A footnote on the report of a UN rapporteur about the Armenian Genocide is not equivalent to UN recognition. Nor can President Ronald Reagan’s reference to the Armenian Genocide memorial be counted as recognition, especially when it was recanted later.

Recognition and quest for compensation go hand in hand. Recognition will only enhance the chances of compensation.

Whatever was not achieved in one century, will be carried over to the next century, until the future generations can bring closure and justice to this deep wound.

Ը Ն Կ Ե Ր Ա Յ Ի Ն Է Ձ

ԾԱՅՐԱՅԵՂ ԷՔ, ԹԵ՞ ԶԱՓԱԻՈՐԱԿԱՆ

Կեանքի մեջ ձեզի համար ամեն բան սեւ կամ ճերմակ է, թե՛ մոխրագույնը կը բաւարարէ ձեզ: Այլ խօսքով, ձեր առօրեայ կեանքին մեջ չափաւորակա՞ն, թե՛ ծայրայեղ անձ էք: Իմանալու համար պատասխանեցէ՛ք փորձ-հարցարանին, ապա կարդացէ՛ք արդիւնքը:

1- Դպրոցէն գանգատ կը ստանաք ձեր գաւկին կարգապահական վիճակին մասին.

- ա.- Ձեր գաւակը խստօրէն կը պատժէ:
- բ.- Ձեր գաւակը կը յանդիմանէ՛ք՝ խիստ պատիժի սպառնալիքով մը:
- գ.- Կը բաւարարուիք անկէ դրական խոստում մը լսելով:

2- Պետութիւններու միջեւ հակադրութիւնները կը լուծուին.

- ա.- Պատերազմով:
- բ.- Բանակցութիւններով:
- գ.- Երրորդ կողմի մը միջամտութեամբ:

3- Ճաշի հիւր ունիք եւ ձեր գլխաւոր ճաշը ձախողած է.

- ա.- Կը թափէք զայն եւ դուրսէն արագ ապսպրանք մը կ'ընէք:
- բ.- Տակաւին կէս ժամ ժամանակ ունիք, կը մտածէք նոր, բայց աւելի դիւրին ճաշի մը պատրաստութեան մասին:
- գ.- Պատրուակ մը գտնելով՝ կը յետաձգէք հրաւերը:

4- Դուք ձեզ կը նմանցնէք.

- ա.- Ճէյն Ֆոնտային:
- բ.- Մայր Թերեզային:
- գ.- Ոչ ոքի:

5- Ձեր գործատերը ձեր ուժերէն վեր գործ



յանձնած է ձեզի եւ կ'ակնկալէ, որ օրին աւարտէք.

- ա.- Երկու-երեք օր անքուն կը մնաք եւ գործը գլուխ կը հանէք:
- բ.- Յաւելեալ ժամանակ կը պահանջէք անկէ:
- գ.- Յուսախաբ ընելու գնով ձեր ժամանակը կ'առնէք եւ օգնական կը պահանջէք:

6- Բարեկամուհիներով կը հանդիպիք եւ կ'որոշէք անգամուան մը համար «խենթանալ»...

- ա.- Մինչեւ առտու կը խմէք, կը պարէք, կը գիտովնաք... դուք ձեզի այդ իրաւունքը կու տաք:
- բ.- Մինչեւ ուշ ատեն կը մասնակցիք խնձոյթին, երկու բաժակ ալ կը խմէք, բայց հրաժեշտ կու տաք՝ յաջորդ օրուան գործը պատճառաբանելով:
- գ.- Կը մերժէք մասնակցիլ, քանի որ երե-

խաները առանձին չէք կրնար ձգել:

7- Ձեր մօտիկ ընկերը կը բացայայտէ ձեր կողմէ իրեն վստահուած գաղտնիք մը.

- ա.- Վերջնականապէս ձեր կապերը կը խզէք անոր հետ:
- բ.- Ձեր ընդվզումն ու յուսախաբութիւնը կը յայտնէք իրեն:
- գ.- Կ'որոշէք այսուհետեւ ոչ մէկ գաղտնիք վստահիլ անոր:

ԱՐԴԻՒՆՔ

- Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը «ա» է, բաւական ծայրայեղ անձ էք, ձեզի համար երկու չափ երկու կշիռ չկայ. ամեն բան սեւ կամ ճերմակ է ձեր մօտ: Ասիկա հաւանաբար արդիւնք է յանձնառու չափազանց իտեալապաշտ ձեր բնաւորութեան: Միջակութիւնները, խախուտ լուծումները, անպարկեշտութիւնը կ'ընդվզեցնեն ձեզ. հետեւաբար հարցերուն մեջ կ'երթաք մինչեւ ծայր, նոյնիսկ եթէ ժամանակ մը ետք պիտի անդրադառնաք ձեր սխալին:

- Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը «բ» է, չափաւորական անձ էք. հարցերը խաղաղ ճամբով լուծելու բանակցութիւններու եւ երկխօսութեան կողմնակից անձ էք: Պոռթկումներ եւ զղջումներ չէք ունենար, անոնց առաջքը կ'առնէք ձեր խոհեմ եւ մտածուած հակազդեցութիւններով, խօսքերով, կեցուածքով:

- Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը «գ» է, կրաւորական, չնախաձեռնող եւ չդիրքորոշող անձ էք: Ձեր մօտ կը պակսի հետաքրքրութիւնը եւ մղումը:

Դարձէք աւելի յանձնառու, դիրքորոշուեցէ՛ք ձեր շուրջ պատահող անցուդարձերուն, այլ խօսքով՝ մասնակցեցէ՛ք կեանքին:

Մարմինը Թունազերծող 5 Մթերք՝ Դեղամիջոցներէն Աւելի Ազդու

Մարմինը թունազերծելու կամ «մաքրելու» համար այժմ ստեղծուած են բազմաթիւ դեղամիջոցներ, սակայն մինչեւ վերջին նորամուծութիւնները միշտ եղած են մթերքներ, թուրմեր կամ աւանդական միջոցներ, որոնցմով հնարաւոր եղած է թունազերծել մարմինը: Շարք մը մթերքներու մեջ կան մարմինը «մաքրելու» օգնող օգտակար նիւթեր ու հանքանիւթեր, որոնք ամբողջութեամբ կրնան փոխարինել յատկապէս քիմիական բաղադրութեամբ դեղամիջոցները: 5 մթերք, որոնք օգտագործելէ յետոյ ձեր մարմինը կը դառնայ «նորածին»:

ՃԱԿՆԴԵՂ



Ճակնդեղը մարմնի համար մեկ մաքրուիչ է: Անիկ կը պարունակէ բջջանք, ֆոսֆոր, վիթամին C եւ շարք մը այլ օգտակար նիւթեր, որոնք կը նպաստեն մարմնէն աւելորդ ու անպէտք մնացորդներու չեզոքացման: Ճակնդեղը կը մաքրէ ստամոքսն ու աղիքները: Անիկ նաեւ կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կ'օգնեն լեարդին

ազատուելու թոյններէ:

ԿԱՂԱՄԲ



Կաղամբը կը պարունակէ մեծ քանակով սննդային հիւսուածքներ, որոնք կ'օգնեն մարմնին իրար միացնելու սննդային ծանր մետաղներն ու թոյնները եւ դուրս հանելու գանոնք աղիքներուն միջոցով: Կաղամբի բաղադրութեան մեջ կը մտնեն կենսական թթուներ, որոնք կը լաւացնեն ստամոքսին եւ աղիքներուն աշխատանքը: Կաղամբը նաեւ ունի բացառիկ վիթամին U, որ կը չեզոքացնէ վտանգաւոր քիմիական նիւթերը եւ ստամոքսի խոցի պարագային քիչ, թէ շատ կը նպաստէ, որ վերքը փակուի:

ՍՆՏՈՐ



Սխտորը կը պարունակէ աւելի քան 400 օգտակար նիւթեր ու տարրեր: Առաջին հերթին անիկ հիանալի միջոց է արեան մեջ քոլեսթերոլի մակարդակը իջեցնելու համար: Սխտորը կը մաքրէ երակները, կը չեզոքացնէ թոքախտի ցուպիկը: Սխտորի միջոցով կարելի է պայքարիլ աղիքներուն մեջ յայտնուող որդերուն դէմ: Անիկա զանոնք դուրս կը շարտէ կալի հետ միասին:

ՍՈՆ



Սոխի գլխաւոր արժէքը ֆիթօսոցիտն է, որմով հարուստ են նաեւ եթերային իւղերը: Ֆիթօսոցիտի միջոցով սոխը կը կատարէ հակաթոյն այնպիսի պաշտօն, որ նոյնիսկ չեն կրնար լաւագոյն դեղամիջոցները: Սոխը նաեւ կը բարելաւէ մարսողութիւնը, կ'օգնէ ստամոքսին առանց ծանրաբեռնուածութեան ու արագ «մաշեցնելու» սնունդը:

ԽՆՁՈՐ



Խնձորը կը պարունակէ մեծ քանակով պեգիլն եւ բջջանք, որոնք կը կարգաւորեն ստամոքսի եւ աղիքներու աշխատանքը: Խնձորը նաեւ կը նպաստէ ստամոքսափութի արտադրութեան եւ կ'ազատէ փորկապուլթենէ: Խնձորի միջոցով կարելի է պայքարիլ այնպիսի վարակներու դէմ, ինչպէս A խումբի վարակները, սդաֆիլազոզը, տիզեն-թերիան եւ բրոդէլը:

Ըստ սննդագետներու՝ այս մթերքները աւելի լաւ կը թունազերծեն մարմինը, քան որեւէ այլ դեղամիջոց: Անոնք նաեւ կը պարունակեն շարք մը կենսանիւթեր, որոնք կը նպաստեն մարմնի դիմադրողականութեան բարձրացման:

Այս էջը պատրաստեց՝ Մալքի Հալաճեան Մարկոսեան

Քալիֆորնիոյ համալսարանը կը հրաժարի ներդրումներ կատարել Թուրքիոյ մէջ

ԱՄՆ Քալիֆորնիոյ համալսարանի Լոս Անճելէսի մասնաճիւղի ուսանողական խորհուրդը միաձայն որոշում կայացուցած է զրկել Թուրքիոյ Հանրապետութիւնը այդ երկրի մէջ համալսարանի կատարելիք 72.6 միլիոն տոլար արժողութեամբ ներդրումներէն եւ պարտատուներէն՝ Թուրքիոյ կատարած յանցագործութիւններու եւ Հայոց Ցեղասպանութեան շարունակական ժխտողականութեան համար:



Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»-ը՝ վկայակոչելով համալսարանի պաշտօնական կայքէջը, Քալիֆորնիոյ համալսարանի ուսանողներու խորհուրդը իր որոշումը ամրագրած է յատուկ բանաձեւով, որը աւելի լայն տարածում ունեցող #DivestTurkey նախաձեռնութեան մաս կը կազմէ: Այս մէկը կազմակերպած է Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Հայկական երիտասարդական հիմնադրամը (ՅԵՀ), որ կոչ կ'ընէ ԱՄՆ կրթական հաստատութիւններուն հրաժարիլ Թուրքիոյ Հանրապետութեան մէջ կատարած իրենց ներդրումներէն:

«#DivestTurkey նախաձեռնութիւնը մեկնարկած է կապ հաստատելու եւ աղբիւրներ տրամադրելու ԱՄՆ համալսարաններու ուսանողներուն եւ գործիչներուն՝ յորդորելով հրաժարիլ Թուրքիոյ Հանրապետութեան մէջ իրենց կատարելիք ներդրումներէն, քանի որ Հայոց Ցեղասպանութեան համար փոխհատուցում չ'է եղած, եւ քանի որ Ցեղասպանութիւնը կը շարունակէ շահութաբեր ձեռնարկ ըլլալ», - ըսած է ՅԵՀ կեդրոնական գործադիր խորհուրդի անդամ Գեւ Իսկաճեանը:

Ֆրանսայի մէջ՝ Չապէլ Եսայեանի անունով փողոց պիտի կոչուի

Ֆրանսական Վիրոֆլի քաղաքին մէջ հետիոտնի ճանապարհ մը պիտի կոչեն հայ մեծանուն գրող Չապէլ Եսայեանի անունով, որ 1920-ական թուականներուն ապրած է այս քաղաքին մէջ:



Այս մասին կը տեղեկացնէ «Nouvelles d'Arménie» պարբերականը՝ նշելով, որ արարողութիւնը նախանշուած է Յունուար 24-ին:

Չապէլ Եսայեան ծնած է 1878 թուականի Փետրուար 5-ին, Կոստանդնուպոլսոյ մէջ: Ան յազեցած գրական եւ քաղաքական աշխատանք ունեցած է Արեւելքի եւ Ֆրանսայի միջեւ:

Օսմանեան Թուրքիոյ մէջ իրականացուած Հայոց Ցեղասպանութեան ընթացքին ան յաջողած է փախչիլ Եւրոպա:

Երկար տարիներ ապրած է Ֆրանսայի մէջ:

1933 թուականին Չապէլ Եսայեան հեռացած է Եւրոպայէն եւ բնակութիւն հաստատած Հայաստանի մէջ: Սակայն 1937 թուականին ան սթալինեան բռնարարներու զոհ դարձած է. Անոր մեղադրած են Խորհրդային միութեան դէմ լրտեսութեան մէջ:

Գրողին աքսորած են Սիպիր, այնտեղ ալ մահացած է, հաւանաբար, 1943 թուականին, 65 տարեկանին:

Հայաստանը Համաշխարհային Քարտեզներում «ապացուցուած Աքսիոմա» ֆիլմի ճանապարհը

Աքսիոմաներն (հանրայայտ ճշմարտութիւն) էլ երբեմն ապացուցման կարիք ունեն...:

Բայց սա ընկրկելու համար չ'է...:

Այլ անընդհատ ասելու... մեթոտներ փնտռելու, ապացուցելու՝ «օտարներին» հասկանալի լեզուով...:

«Ապացուցուած Աքսիոմա» ֆիլմի նպատակն է ճշմարտութեան վրայ լոյս գցելը:


Ի՞նչ է իրենից ներկայացնում ֆիլմը

Հայաստանի մասին առաջինը մ.թ.ա. 6-րդ դարի կաւէ սալիկի վրայ պատկերուած քարտեզն է վկայել, որտեղ Բաբելոնը նշուած է որպէս աշխարհի կեդրոն, որի մօտ պատկերուած են Ասորեստանն ու Հայաստանը: Քարտեզը պահուում է Լոնտոնի Բրիտանական թանգարանում: Այս կաւէ սալիկը Հայաստանի դարաւոր գոյութեան մասին պատմող աքսիոմա է: Եւ այն միակը չ'է. Այն միայն առաջինն է: Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի եւ մի շարք այլ երկրների թանգարաններում ու գրադարաններում կան քարտեզներ, որտեղ պատկերուած է Հայաստանն իր երբեմնի սահմաններով: Սրան գումարած օսմանական քարտեզներ, որտեղ օսմաներէնով նշուած է Հայաստանի տեղը, եւ ծովից ծով ձգուող տարածքները:

Որ՞ն է ֆիլմի նպատակը

Յատկապէս հիմա, երբ Ցեղասպանութեան հարիւրամեակի շեմին ենք կանգնած, պէտք է «ապացուցել» վաղուց յայտնի աքսիոմաները: Այս պարագայում ոչ թէ հայերս ենք խօսում, այլ այդ երկրներում պահուող «կենդանի» վկաները, քանի որ նոյնիսկ օսմանական քարտեզներում Արեւմտեան Հայաստանի տեղանունները հայերէնով նշուած՝ Վան, Էրզրում...:

Աքսիոմաները ապացուցելու գործով զբաղւեց երբեմնի ինժեներ, հիմա արդէն քարտեզագետ Ռուբէն Գալչեանը, որ մի քանի լեզուներով հրատարակեց «Հայաստանը համաշխարհային քարտեզագրութեան մէջ» գիրքը: Գրքի հիման վրայ ստեղծուեց «Ապացուցուած Աքսիոմա» փաստավաւերագրական ֆիլմը: Ֆիլմում քարտեզների գիծը պատկերուում է հենց քարտեզագետ Ռուբէն Գալչեանի կենսագրութիւնով, որ ծնունդով վանից է, ապրել է Պարսկաստանում, այնուհետեւ տեղափոխուել Անգլիա,



նր եւ սկսել է զբաղուել իր կորցրած հայրենիքի տարածքները փնտռելու գործով... գոնէ քարտեզների վրայ:

Ֆիլմի ստեղծումը նախաձեռնեցին Անժելա Ֆրանգեանն ու Մարիաննա Աբրահամեանը: Ֆիլմի հեղինակները ցաւ են յայտնում, որ դարերի պատմութիւն ունեցող քարտեզները հաւաքագրելիս, որոշ քարտեզներին միայն այսօր են ծանօթացել:

Ֆիլմն իրենից մի ողջ պահանջատիրութիւն է ներկայացնում, եւ ինչու չ'է դիւանագիտական ուրոյն ու անվնաս մի զէնք է տեղեկատուական պատերազմների այս դարաշրջանում: Այն կարճ ճանապարհ է ցոյց տալիս աշխարհին ապացուցելու դարեր ի վեր յայտնի ճշմարտութիւնը: Քարտեզները մեր անցեալի վկաներից են: Եւ այսօր Թուրքիան որքան էլ որ յոխորտայ ու մեծ գումարներ ծախսի սեփական PR-ի համար, միեւնոյն է երբ սեղանին դնենք Օսմանեան կայսրութեան շրջանում հրատարակուած քարտեզները, ուր նշուած է Հայաստանը, կամ եթէ աշխարհին եւ պատմութեան վրայ աչք փակող Ատրպէյճանին ներկայացնենք քարտեզներ, որտեղ յստակ երեւում է, որ Ատրպէյճանը գոյութիւն չ'ի ունեցել եւ այն միայն 1918թ.-ից սկսած է ի յայտ գալիս քարտեզներում, որը նոյնիսկ իր սեփական անունը չ'ունի եւ այդ պետութիւնն անուանում են Ատրպէյճան՝ օգտագործելով Իրանի հիւսիսարեւմտեան շրջաններից մեկի անուանումը, որը կիրառուել է

մինչեւ 1918թ.-ը, ապա եւս մեկ աքսիոմա կ'ապացուցենք:

Վստահաբար ընթերցողն էլ տալու է այն հարցը, որ ֆիլմի սկզբից մինչեւ վերջ եւ դեռ հիմա էլ շարունակում ենք ինքներս մեզ տալ. «Լաւա՛, փաստեցի՛նք, իսկ յետո՛յ...»:

Պէտք է գիտակցենք, որ սա մեր զէնքն է, որից օգտուել պէտք է իմանանք բոլորս անխտիր, որպէսզի ամենատարրական խօսակցութիւնների ժամանակ, այս փաստերը ուղղակի դրուեն գրուցակցի սեղանին: Վիճելու եւ ապացուցելու փոխարէն պէտք է ուղղակի ներկայացնել փաստերը, իսկ մինչ այդ անհրաժեշտ է անուն ազգանունը իմանալու չափ տիրապետել այս գիտելիքներին:

Ֆիլմի յաջողութիւնները

Ի դէպ «Հայկական Հարցերի Ուսումնասիրման Կեդրոնի», «Կովկասի Հետազոտական Կեդրոնի» /IRAS/ նախաձեռնութեամբ, Նոյեմբերի 18-ին Թեհրանի Արարատ մարզաւանում կայացել է «Կովկասի աշխարհագրական սահմանները պատմութեան յորձանուտում» գիտաժողովը, որի բացումը կայացել է վերոնշեալ «Ապացուցուած Աքսիոմա» պարսկալեզու փաստագրական ֆիլմով:

Գիտաժողովի ընթացքում հայկական կողմից ելոյթ են ունեցել ՀՀ ԳԱԱ Պատուաւոր դոկտոր, ազատ հետազոտող, քարտեզագետ Ռուբէն Գալչեանը, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան բաժնի վարիչ, պատմական գիտութիւնների թեկնածու Արմէն Մարութեանը եւ իրաւաբան, պատմաբան, «Մոտուս Վիւենտի» ՀՀ ղեկավար Արա Պապեանը: Իր խօսքն է յղել նաեւ ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը: Իրենց դասախօսութիւններով ելոյթ են ունեցել նաեւ իրանցի մտաւորականներ, համալսարանի դասախօսներ, քաղաքական հարցերի վերլուծաբաններ, ինչէլ հարց ու պատասխան ներկաների մէջ:

Նշենք, որ «Ապացուցուած Աքսիոմա» ֆիլմի հայերէն տարբերակը 2012 եւ 2013 թուականներին, արդէն իսկ ցուցադրուել է հայ հանդիսատեսի համար Թեհրանում եւ Լոնտոնում:

ՀՀ Սփիւռքի նախարարութեան նուիրուած ձեռագիրներն ու հնատիպ գիրքերը յանձնուեցան Մատենադարանին

Յունուար 23-ին Երեւանի Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի փոքր սրահէն ներս տեղի ունեցաւ հալէպահայ Սօսէ Պարոնեանի՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան նուիրած ձեռագիրներու եւ հնատիպ գիրքերու՝ Հայաստանի գլխաւոր ձեռագրապահոցին փոխանցելու հանդիսաւոր արարողութիւնը:

Ողջոյնի խօսքով հանդէս եկան ՀՀ սփիւռքի նախարար Հրանտ Զակոբեանը եւ Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Հրաչեայ Թամրազեանը:

Ողջունելով ներկաները՝ Սփիւռքի նախարարը մասնաւորապէս նշեց. «խորհրդանշական է, որ այսօր պատուաբեր առաքելութեամբ գտնուում ենք Մատենադարանում՝ հայկական ձեռագրերի հարուստ մշակոյթի այս ինքնատիպ պահոցում:

«Ազգի նուիրեալ զաւակ հալէպահայ Սօսէ Պարոնեանի մեծ հայրն ու մայրը՝ Մովսէս եւ Չարթիկ Ասլանեան-պարոնեանները, ովքեր Հայոց Տեղասպանութեան արիւնալի օրերին, մահն աչքերի առաջ ունենալով, թուրքի ահասարսուռ ճիրաններից առաջին հերթին փրկել եւ խարբերոյից Հալէպ եւ տեղափոխել մեծ արժէք ներկայացնող այս գրքերը՝ աղօթագրքեր, բանարաններ, աւետարաններ եւ 18-րդ դարի մէկ ձեռագիր, որոնց ճակատագիրը ոչնչով չի տարբերուում եղեռնագարկ հայ մարդու ճակատագրից:

«Սօսէի ծնողները՝ Անդրանիկ եւ Մարգրիտ Ղանդիլեան-պարոնեանները, ամենայն հոգածութեամբ պահել ու պահպանել են դրանք՝ իրենց նուիրական առաքելութեան իրաւայաջորդը դարձնելով Սօսէին: Սօսէ Պարոնեանը Սիրիայի համար այս տաճնապալի օրերին որոշում է կայացրել՝ Պարոնեանների ընտանեկան ժառանգութիւնից 1 ձեռագիր եւ 14 հնատիպ գիրք



«սիրիահայութեան շտապ օգնութեան մարմնի եւ Հալէպում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան աջակցութեամբ նուիրել է Հայրենի պետութեանը՝ ի դէմս ՀՀ սփիւռքի նախարարութեան: Այդ անգնահատելի նուիրը պատասխանատուութեան մեծ զգացումով յանձնում ենք մաշտոցեան Մատենադարանին՝ ի պահ»:

Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Հրաչեայ Թամրազեան շնորհակալութիւն յայտնեց անգնահատելի նուիրատուութեան համար: Ան նշեց, որ վերապրած կարելի է համարել Մատենադարանի ողջ հաւաքածուն, որ նուիրատուութիւններու շնորհիւ վերջին տարուան ընթացքին համալրուած է 500-է աւելի ձեռագիրներով եւ աւելցուց. «Պէտք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ ձեռագրերը տուն դարձնելու համար: Մեր խորին երախտագիտութիւնը նուիրատուին՝ Սօսէ Պարոնեանին, սփիւռքի նախարար Հրանտ Զակոբեանին՝ մեր զարգացման ծրագրերին մշտապէս սատարելու համար»:



Յուզողութեամբ գիրքերու նուիրատու Սօսէ Պարոնեանի եւ Բերիոյ թեմի մամլոյ խօսնակ, Սուրբ Յայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքներու ընդհանուր խօսնակ Ժիրայր Ռեյիսեանի տեսաուղերձները: Հրաչեայ Թամրազեան Սօսէ Պարոնեանը պարգևատրեց Մատենադարանի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» յուշամետալով:

Հայերն ու Յոյները ստորագրահաւաք կը կատարեն Տեղասպանութեան փաստերը աղաւաղող ժապաւենին դէմ



Աւստրալիացի դերասան Ռասըլ Զրոյի «Ձուր Որոնողը» ժապաւենը մեծ ազդուկ բարձրացուցած է հայկական եւ յունական սփիւռքին մէջ: Կալիֆոլի ճակատամարտին մասին պատմող այս ժապաւենին ծանուցումին մէջ կը պատմուէր, թէ ան փաստաւարագրական ֆիլմ մըն է, որ կը պատմէ հայերու եւ յոյներու ցեղասպանութեան մասին: Սակայն ֆիլմի՝ Աւստրալիոյ եւ Թուրքիոյ մէջ դեկտեմբերին տեղի ունեցած անդրանիկ ներկայացումներէն ետք պարզուած է, որ իրականութեան մէջ հոն խեղաթիւրուած են պատմական փաստերը, եւ Ռասըլ Զրո զանոնք ներկայացուցած է այնպիսի ձեւով, որ իբրեւ թէ թուրքերն են բուն զոհերը:

Հայկական եւ յունական սփիւռքը արդէն հազարաւոր նամակներ յղած են զանազան խմբագրութիւններու, ինչպէս նաեւ ֆիլմի արտադրութեան պատասխանատուներուն՝ պահանջելով չցուցադրել պատմական փաստերը խեղաթիւրող թրքամետ այդ ժապաւենը:

Խնդրայարոյց ժապաւենին բեմադրիչը եւ գլխաւոր դերակատարը Ռասըլ Զրոն է, դերասանական կազմը մեծ մասով կը բաղկանայ թուրքերէ, նկարահանումներն ալ ընդհանրապէս կատարուած են Թուրքիոյ մէջ: Միայն Աւստրալիոյ մէջ ժապաւենը արդէն 10 միլիոն տոլար եկամուտ ապահոված է:

Առ այժմ, ո՛չ Ռասըլ Զրո, ոչ ալ շարժապատկերի ընկերութիւնը որեւէ մեկնաբանութիւն կատարած են այս առնչութեամբ:

Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութեան Հարցը Յայտնուած Է Սահմանադրական Դատարան

Սթամպուլի հայ համայնքի փաստաբաններէն Սեդրակ Տաւութեանը Պոլսոյ հայոց պատրիարքի ընտրութեան հետ կապուած դիմած է Սահմանադրական դատարան:

Ըստ «News am»-ի, որ կը վկայակոչէ թրքական «Միլլիյէթ» թերթը, սթամպուլահայ համայնքի մէկ մասը անհանգստացած է, որ Պոլսոյ հայոց պատրիարքի հիւանդութեան հետեւանքով պետութեան կողմէ փոխպատրիարք նշանակուած է: Հայ համայնքի ներկայացուցիչները կը պնդեն, որ Պոլսոյ հայոց պատրիարքարանի կանոնադրութեան մէջ չկայ փոխպատրիարք հասկացութիւն եւ կը պահանջեն պատրիարքի նոր ընտրութիւն կազմակերպել:



Այս խօսակցութիւններուն գումարուած է եւս մէկը, ըստ որուն, Պոլսոյ հայոց փոխպատրիարք (պատրիարքական ընդհանուր փոխանորդ) արք. Արամ Աթէշեան հանդիպում կը պահանջէ Թուրքիոյ ՆԳ նախարարին հետ, սակայն Աթէշեան պնդած է, թէ ՆԳ նախարարին հետ իր հանդիպման պատճառը ընտրութիւնները չեն:

Պոլսոյ հայոց պատրիարքարանի հոգեւորականներէն եպիսկոպոս Սահակ Մաշալեանը, որ պատրիարքի ուժեղ թեկնածուներէն մէկն է, յայտարարած է, թէ իրենք կը կասկածին, որ արք. Աթէշեան ՆԳ նախարարին հետ հանդիպած է պատրիարքի ընտրութիւններուն հետ կապուած:

Սթամպուլի հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցի հիմնադրամի նախագահ՝ Պետրոս Շիրինօղլուն յայտնած է, թէ իրենց հիւանդանոցին մէջ բուժուող պատրիարք Մեսրոպ Մուրաֆեանի գլխուղեղի գիտակցական տարրերը չեն գործեր եւ բժշկական տեսանկիւնէ ան վերականգնել հնարաւոր չէ, ուստի պէտք է նոր պատրիարք ընտրել:

Հայ համայնքի փաստաբաններէն Սեդրակ Տաւութեան դիմած է Սահմանադրական դատարան՝ նշելով, որ Հայոց պատրիարքարանի 550-ամեայ պատմութեան մէջ փոխպատրիարք հասկացութիւն երբեք չէ եղած:

Exclusive tour of ancient and modern
EGYPT
FEBRUARY 25 - MARCH 8, 2015

Itinerary	
Wednesday Feb. 25	Departure from Montreal (or other cities)
Thursday Feb. 26	Arrival at Cairo International airport. Bus transfer to hotel Le Meridien Heliopolis 5 star on B & B basis. Welcome dinner at Gogian Club.
Friday Feb. 27	Egyptian museum (treasures of Tut Ankh Amon and Hall of the mummies) Lunch at Andrea restaurant. Sound and light show at the pyramids.
Saturday Feb. 28	Citadelle area and Khan Khalil souk. Lunch at Fridays restaurant on the Nile. Attend the "Beast on the moon" play, followed by dinner at Houssaper Club.
Sunday March 1	Saqqara, the pyramids of Giza and the Sphinx. Lunch at Homenetmen Noubar Club. Dinner on the Nile Crystal (Nile cruise dinner with show).
Monday March 2 to March 5	Transfer from hotel to airport: Flight Cairo-Aswan. Transfer in Aswan to a 5 star Nile cruise boat, full board basis. The cruise will last for 3 days. You will visit: High Dam, Unfinished obelisk, Philea Temple, Temple of Edfu, Temple of Kom Ombo, Valley of the Kings, Temple of Karnak, Temple of Luxor, Temple of Queen Hatchipsut and Colossus of Memnon ...
Thursday March 5	Transfer from Luxor to Hurghada by bus. Two nights at the Marriott Hurghada hotel 5 star on half board basis.
Friday March 6	Enjoy the red sea (Bathing, Skin or Scuba diving, Fishing, Boating).
Saturday March 7	Transfer from Hurghada to Cairo by plane. One night at Le Meridien Airport 5 star on b.b. basis.
Sunday March 8	Flight back home and arrive on March 8th

Land cost \$1,380 USD + Air travel (approx \$900 USD)*

The cost of \$1,380 USD per person includes:
5 star accommodation (double occupancy, single room available for an additional \$250 USD)
Flights from Cairo-Aswan and Hurghada-Cairo
Local transportation, driver, guide, shows, entrance fees & taxes
Mostly full board (except few meals)
Excludes visa fees (to be paid upon arrival)

For details and questions about registration:
Address to the Tekeyan Cultural association (514) 747-6680 centretekeyan@bellnet.ca
or Arto Manoukian (514) 824-5300 manoukb@yahoo.com

Additional information:
A valid passport is needed with more than 6 months expiry date at departure time.
A deposit of \$500 USD is required upon registration.
The payments should be made no later than January 15, 2015.
(* Group rates, depending on the number of participants. Non Montrealers to book their own flights and will be greeted at Cairo's International Airport upon arrival.

A UNIQUE OPPORTUNITY TO VISIT PHARAOH'S LAND

Ցեղասպանության 100-ամեակի ծիրեն..

Շաբ. էջ 4-Էն

Տօթթ. Եղապատան շնորհակալություն յայտնեց ու յուշանուէրով մը պատուեց Պրն. Գարակէօզեանը՝ Նշելով անոր ատենապետութեան շրջանի աւարտը, իսկ Յովնան Սրբազանին նուիրեց Երեւանի Ցեղասպանութեան թանգարանին եւ Ասպետներուն հրատարակած նորատիպ հատորէն օրինակ մը, որուն ներկայացումն ու ցուցահանդէսը տեղի պիտի ունենայ 8-10 Ապրիլ 2015-ին, Սփրայոլ կեդրոնին մէջ:

Հ.Բ.Ը.Մ.-ին պիտի յաջորդեն այլ կազմակերպութիւններ, որոնք նոյնպէս պիտի արժանանան Հայոց Առաջնորդարանի յարգանքին՝ ի տես յետ Ցեղասպանութեան անոնց կատարած ազգային լայն գործունեութեան:

Հրանդ Տիկի սպանութեան..

Շաբ. էջ 3-Էն

մը եւս կրկնել իմ երդումը, որ ի գին ամեն զոհողութեան պիտի ջանամ արդարութիւն ապահովել եւ ապագայ սերունդներուն ամօթներ մաքրուած ապագայ մը յանձնել:»

Ան շարունակելով իր խօսքերը Հրանդին ուղղուած հետեւեալ խօսքը ըրաւ՝ «Երդումս երդում է, իմ կարողութեանս սահմաններուն ներքեւ մինչեւ կեանքիս վերջը պիտի շարունակեմ պահանջել ճշմարտութիւն եւ արդարութիւն:»

Այս խօսքերու աւարտին Ֆէփիյէ Զէփին ներկայաներուն կողմէ յոտընկայս որոտընդոստ երկարատեւ ծափահարութիւններով զնահատուեցաւ: Մինչ այդ կազմակերպիչ

յանձնախումբերու անունով Արամ Իշնար օրուայ հիւր զեկուցաբերին յանձնեց ոսկեայ յուշանուէր մը, որուն մէկ կողմը քանդակուած էր Հրանդ Տիկիի նկարը:

Այնուհետեւ Ֆէփիյէ Զէփին իրեն ուղղուած զանազան հետաքրքրական հարցումներուն պատշաճ կերպով պատասխանելէ ետք, առաջնորդութեամբ՝ հոգեւորականներու եւ ներկայներու որոնք ի ձեռքն ունենալով «Je suis Hrant» եւ «Je suis Charlie» վերտառութիւններ դէպի Նահատակներու Յուշարձան քալեցին, ուր զետեղուեցաւ գրի ազատութեան նուիրուած ծաղկեպսակ մը: Ապա Ֆէփիյէ Զէփին իր գիրքերը մակագրեց փափաքողներուն: Այսպէսով յուզմունքից եւ նոյնքան տպաւորիչ բացառիկ երեկոն իր աւարտին հասաւ:

Անժամանակ եւ կանխահաս մահ երաժիշտ...

Շաբ. էջ 1-Էն

համալսարանի Երաժշտութեան ֆաքիւլթէին մէջ (1976-1982) կատարելագործած էր իր պարիթոնի ձայնամարզութիւնը եւ արժանացած էր օփերայի երաժշտութեան վկայականին:

Սկսեալ 1977-էն, Արթուր սկսած էր իր պարիթոնի գեղեցիկ ձայնով ստանձնել օփերայի դերեր: Ան փայլուն յաջողութեամբ կատարած է Նուազագոյնը 50 դերեր ծանօթ դասական օփերաներու, ներառեալ հայկական «Արշակ Բ» օփերան եւ արժանացած բարձր գնահատանքի հայ եւ մանաւանդ օտար երաժշտասերներու կողմէ: Ան նաեւ վարած է երգչախումբերու ղեկավարութեան պաշտօններ օտար այլ փոքրամասնութիւններու համայնքներէն ներս:

Հայ գաղութին մէջ Արթուր Միլիէնտիսեանի վաստակը կը կայանայ գլխաւորաբար՝ տեղույս ՀԲԸՄ Արմէն Քեպէք Ալեք Մանուկեան վարժարանի որպէս երաժշտութեան դաստիարակ եւ խմբավար, մօտ 40 տարիներ, վարժարանի սկզբնական տարիներէն՝ 1977-էն մինչեւ իր վաղահաս մահը: Ալեքի քան երկու հազար հայ մանուկներ ու պատանիներ հմայուած են իր ճպտոյն տակ ու անոնց հոգիներուն մէջ դրոշմուած են հայկական երգերն ու երաժշտութիւնը: Այս մարզին մէջ Արթուր Միլիէնտիսեանի մեծագոյն նուաճումը եղած է երաժիշտ Համբարձում Պերպերեանի մանկական «Թիթեռ» օփերայի ամբողջական բեմադրութիւնը վարժարանի աշակերտութեան կողմէ, ներկայութեամբ յօրինող երաժիշտին եւ մեծ բարերար Ալեք Մանուկեանի: Վարժարանի տարեկան իւրաքանչիւր տարեվերջի աւանդական հանդէսը կը վերածուէր մշակութային իսկական փառատօնի մը երբ ներկայ խումբերամ ժողովուրդը փրոֆեսիոնալ մակարդակով հայկական եւ միջազգային երաժշտական ու գրական գոհարներով կը լիցքաւորուէին:

Արթուր անաղմուկ ու միշտ ժպտաղէմ երբեք չէ մերժած հայկական կազմակերպութեան մը կողմէ երաժշտական յայտագրի մը պատրաստութեան եւ ներկայացման խնդրանքները: Անհամար են Թէքեան Մշակութային Միութեան, ՌԱԿ-ի, Պոլսահայ Մշակ. Միութեան, ՀԲԸՄ-ի եւ մեր եկեղեցիներուն մշակութային գործունեութիւններուն իր բերած մասնակցութիւնը: Ան երկար տարիներ եղած է տեղույս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի երգեհոնահարը, երբեմն՝ խմբավարը եւ մասնակցած է երգեցողութիւններու:

Հակառակ որ Արթուր Միլիէնտիսեան կանուխէն զրկուեցաւ ծնողական սերէ ու գուրգուրանքէ, սակայն ան միշտ մեծահոգի, բարիացակամ ու յարգալից եղաւ մանուկէն մինչեւ տարեցին հետ ու արժանացաւ բոլորին փոխադարձ սիրոյն ու յարգանքին:

Այս տխուր առիթով, ողբացեալ Արթուր Միլիէնտիսեանի միակ ազգական՝ Փարիզ բնակող իր քրոջ դուստրին՝ Ալիս Զիմիքի եւ Նիւ Եորք բնակող զարմիկին, «Ապագայ»-ի անձնակազմը, ՌԱԿ-ի եւ ԹՄՄ-ի վարչութիւնները իրենց խորագրած ցաւակցութիւնները կը յայտնեն եւ կը բաղձան որ միտիթարուին ողբացեալին բարի յիշատակներով:

**ԹՄՄ Մոնթրէալի վարչութիւն
ՌԱԿ Մոնթրէալի վարչութիւն
«Ապագայ»-ի անձնակազմ**



**EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ**

**Յայտարարութիւն
ANNOUNCEMENT**

Գանատայում ՀՀ դեսպանութիւնը տեղեկացնում է, որ 2015թ. Յուլիսի 2-4-ը Երեւանում կը կայանայ միջազգային բժշկական 4-րդ համագումարը:

Համագումարի եւ մասնակցութեան պայմանների մասին անհրաժեշտ տեղեկատուութիւնը կարելի է ստանալ www.4imca.am կայքում:

Համագումարին ելոյթով հանդէս գալու նպատակով հետազօտողները, գործնական եւ համալսարանական բժիշկները, առողջապահութեան կազմակերպիչներն ու հանրային առողջութեան մասնագետները կարող են բժշկագիտութեան եւ յարակից ոլորտներին վերաբերող թեզեր ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ www.4imca.am կայքի «Յօդուածներ» բաժնի միջոցով մինչեւ 2015թ. Փետրուարի 28-ը: Թեզերի եւ ելոյթների ընդունման կամ մերժման մասին հեղինակները կը տեղեկացուեն մինչեւ Ապրիլի 15-ը:

Embassy of Republic of Armenia to Canada informs, that the 4th International Medical Congress of Armenia will take place in Yerevan on July 2-4, 2015.

For information about the Congress and the details of participation please check the following website at www.4imca.am.

Researches, practicing and teaching doctors, healthcare professionals and public health specialists interested in speaking in the frameworks of the Congress may present their theses on medical science and related subjects online – at the “Abstracts” section of www.4imca.am until February 28, 2015 the authors will be notified on approval or refusal of the theses and speeches by April 15.



Մեր սիրելի թատերասեր հասարակության ուրախութեամբ կը յայտարարենք՝ որ Թ.Մ.Միութեան Հայ Բեմ թատերախումբը նախ քան ուղղուիլը մեծապէս սպասուած իր շրջապտոյտին դէպի Եգիպտոս՝ ընդառաջելով յատուկ հրաւերներու, երկու բացառիկ ներկայացումներով ելոյթ պիտի ունենայ

Առաջինը՝ Օթթաուայի մէջ 14 Փետրուար 2015-ին Կազմակերպութեամբ՝ Օթթաուայի Հայ Մշակութային Միութեան

Երկրորդը՝ Թորոնթոյի մէջ 15 Փետրուար 2015-ին Կազմակերպութեամբ՝ Թորոնթոյի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

Արդ՝ ձեզ կը հրաւիրենք ներկայ գտնուելու այս երկու յատուկ առիթներուն վայելելու համար Հայ Բեմի շնորհալի եւ բարձրորակ կատարողութիւնը

Քնանալէն առաջ խուսափեցէք iPad-ով ընթերցել

Հաւանաբար լսած էք, որ քնանալէն առաջ հեռատեսիլի պաստառին նայիլը կրնայ վատ անդրադառնալ քունի վրայ, բայց նոր հետազոտութեան տուեալները ցոյց կու տան, որ խնդիրը շատ ավելի լուրջ է:

Համաձայն հետազոտութեան՝ քնանալէն առաջ iPad-ով կարդալը ոչ միայն ավելի կը դժուարացնէ քնանալը, այլեւ կ'ազդէ յաջորդ օրը ձեր զգոնութեան ու աշխուժութեան վրայ: Հետազոտութեան արդիւնքները կրնան ազդել բոլոր անոնց վրայ, որոնք քնանալէն առաջ կ'օգտագործեն eReader, laptop, smart phone կամ հեռատեսիլ:

Նախկին ուսումնասիրութիւններէն յայտնի է, որ Նշուածներէն արձակուող լոյսը կը փոխէ քունի եւ զգոնութեան ցուցանիշները եւ կը նուազեցնէ մելաթոնի մակարդակը մարմնի մէջ: Հետազոտութիւնը ցոյց կու տայ քունի վրայ լոյս արձակող սարքերով եւ տպագիր գիրքերով կարդալու հետեւանքներուն համեմատութիւնը:

Հեղինակները կը նշեն, որ եթէ չէք փափաքիր զոմպիի պէս ըլլալ օրուան ընթացքին, կարդացէք տպագիր գիրքեր կամ թերթեր: Քունի պակասը կապուած է առողջական շարք մը այլ հիւանդութիւններու հետ՝ գիրութիւն, շաքարախտ, սրտանօթային հիւանդութիւն, իսկ մելաթոնի քրոնիկ ցած մակարդակը կապուած է որոշ տեսակի բաղկեղներու բարձր վտանգին հետ:

Գիտնականները խորհուրդ կու տան քնանալէն առաջ խուսափիլ լոյս արձակող գործիքներէն, իսկ անոնց, որոնք երեկոյեան ստիպուած են օգտագործել համակարգիչներ կամ այլ սարքեր, կրնան օգնութեան հասնիլ ծրագիրները կամ ճարտարագիտութիւնները, որոնք կը զտեն եւ կ'արգելափակեն կապոյտ լոյսը:



AGBU TORONTO IN COLLABORATION WITH THE "HAY PEM" THEATRE TROUPE OF THE TEKEYAN ARMENIAN CULTURAL ASSOCIATION OF MONTREAL PRESENTS:



ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՀԻԻԱՆՈՐ LE MALADE IMAGINAIRE

UNE COMÉDIE HILARANTE DE
MOLIÈRE



ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՆԱՆՍԻ ԻՍՍԱ ԹՈՐՈՍԵԱՆ
ADAPTATION AND DIRECTION BY NANCY ISSA TOROSIAN

NEW AND ORIGINAL MUSIC COMPOSED BY ARDEN ARAPYAN

BABAYAN AUDITORIUM OF AGBU ALEX MANOOGIAN CULTURAL CENTRE
930 PROGRESS AVENUE, TORONTO

SUNDAY FEBRUARY 15 6:30 P.M.

ULU
TICKETS:
\$25

VIP
\$50

\$250 SPONSORSHIP
INCLUDES 2 VIP
TICKETS

FOR TICKETS AND INFORMATION:

416-431-2428 or agbutoronto@bellnet.ca

PHOTO: KEYORK TOROSIAN
DESIGN GRAPHIQUE: ELIZE BOGOSIAN



Komitas

SALON FUNÉRAIRE
ԹԱՐՄԱՆԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Funéraille Traditionnel
Monument
Pré-arrangement

5180, rue Salaberry
Montréal, Québec H4J 1J3
Tél. : 514 331-0400

www.komitas.ca

Ouverture de la nouvelle Pharmacie ARSLANIAN

Vos pharmaciens Abel et Alex Arslanian vous accueilleront au 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Vos professionnels de la Santé seront là pour vous servir tous les jours du Lundi au Vendredi de 8h00 à 20h00 et le samedi de 8 h à 18h00

Prise de pression artérielle, saturation d'oxygène, glycémie, cholestérol, suivi du dossier pharmacologique, service de livraison.

Vous pouvez transférer vos prescriptions si vous le souhaitez.
Bienvenue à notre clientèle fidèle.



Pharmacie Abel-Claude ARSLANIAN
1500 blv Henri-Bourassa ouest
Tel 514-303 3832



Affilié à UNIPRIX CLINIQUE

Բացում նոր Դեղարան ԱՐՍԼԱՆԵԱՆԻ

Ձեր դեղագործները Աբել եւ Ալեքս Արսլանեան ձեզ կ'ընդունին իրենց նոր հասցեին վրայ 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Ձեր առողջապահական մասնագետները պատրաստ են ձեզի միշտ ծառայելու ամեն օր երկուշաբթիէն Ուրբաթ առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

Կրնաք նաեւ քննել տալ ձեր ճնշումի մակարդակը, թթուածինի բաւարարուածութիւնը, շաքարախտի վիճակը, քոլեսթերոլը, ձեր դեղարանային թղթածրարի հետեւումը եւ դեղերու մինչեւ տուն սպասարկութիւնը:

Կրնաք նաեւ ձեր դեղերու թղթածրարները փոխանցել դեպի մեր դեղարանը ձեզի աւելի լաւ ծառայելու համար:
Բարի եկած էք մեր մօտ իբր հաւատարիմ յաճախորդներ:



Դեղարան Աբել - Գլոստ Արսլանեան
1500 blv Henri-Bourassa Ouest, Montréal, Qc
Հեռ. 514 303-3832